Ծանուցում՝ Ապահովադրի կողմից առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը վերաբերող դրույթները դեռևս չեն գործում: Դրանց ուժի մեջ մտնելու մասին Բյուրոյի կայքում կհրապարակվի առանձին հայտարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
18/02/2016թ թիվ 1-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
«20» ապրիլի 2016թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-001

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՀԻՄՆԱՐԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ)

ԵՐԵՎԱՆ - 2016

ԲԱԺԻՆ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1.
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Բյուրոյի www.paap.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները ներառող սույն կանոնները և Բյուրոյի այլ կանոնները (այսուհետ նաև՝ Պայմաններ) և ԱՊՊԱ վկայագիրը (այսուհետ նաև՝ Վկայագիր) միասին կազմում են ԱՊՊԱ պայմանագիրը:

2. ԱՊՊԱ պայմանագրի առարկա հանդիսացող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), այլ իրավական ակտերով, Վկայագրով և Պայմաններով: Ընդ որում, այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունների համար Պայմաններով նախատեսված են Օրենքով սահմանվածից առավել խիստ պայմաններ՝ ներառյալ որոշակի գործողությունների իրականացման առավել կարճ ժամկետներ, ապա ապահովագրական ընկերություններն այդ մասով առաջնորդվում են Պայմաններով:

3. ԱՊՊԱ պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) Բյուրո՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

2) ապահովագրական ընկերություն՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերություն,

3) Ապահովագրող՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերություն,

4) Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքած անձ,

5) ապահովագրված անձ՝ Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ տվյալ ապահովագրական պատահարի ժամանակ այն օրինական հիմքով տիրապետած այլ անձ,

6) տուժող՝ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով Օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, որն Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք: Տուժող են համարվում նաև սույն ենթակետի առաջին նախադասությամբ նախատեսված՝ անձի մահվան դեպքում Օրենքի համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք,

7) Ավտոտրանսպորտային միջոց՝ տվյալ ԱՊՊԱ պայմանագրի Վկայագրում կամ դրա հավելվածում նշված համարանիշին կամ սույն կանոններով նախատեսված դեպքերում նույնացման համարին կամ կամ թափքի համարին՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին պետական հաշվառում իրականացնող մարմնի և (կամ) արտադրողի տվյալներով համապատասխանող ավտոտրանսպորտային միջոց (միջոցներ),

4. ԱՊՊԱ պայմանագրում օգտագործվող այլ հասկացություններն ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և Օրենքում կիրառվող նշանակությունը, եթե կոնկրետ դրույթի բովանդակությունից չի բխում դրա օգտագործման այլ իմաստ:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

5. ԱՊՊԱ պայմանագրի կողմեր են համարվում Վկայագրի համապատասխան դաշտերում նշված Ապահովագրողը և Ապահովադիրը: Պայմանների և Վկայագրի դրույթներն ու պահանջները պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար: Այն դեպքում, երբ Ապահովադիրն Ավտոտրանսպորտային միջոցը վարման է հանձնում այլ անձի, ապա Ապահովադիրը պարտավոր է վերջիններիս տեղեկացնել Պայմաններով նախատեսված պարտավորությունների անվերապահ կատարման մասին: Հակառակ դեպքում այդ պարտավորությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

6. ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (ապահովագրված անձի) այն գույքային շահերը, որոնք կապված են Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող Ապահովադրի (ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից տուժողին կամ նրա գույքին պատճառված Օրենքով և Պայմաններով սահմանված վնասների գծով:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

7. Ապահովագրողը պարտավոր է Պայմաններով նախատեսված բոլոր ծանուցումները Պայմաններով նախատեսված անձանց ուղարկել իրավասու էլեկտրոնային փոստի հասցեով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ծանուցում ստացողը երբևէ ԱՊՊԱ պայմանագիր չի կնքել (ապահովադիր չի հանդիսացել) կամ վերջին ԱՊՊԱ պայմանագիրը կնքված է եղել մինչև էլեկտրոնային փոստը որպես վկայագրի պարտադիր լրացման դաշտ սահմանելը և դրանում նշված չի եղել էլեկտրոնային փոստի հասցե: Սույն կանոնների իմաստով իրավասու էլեկտրոնային փոստի հասցե է համարվում՝

1) Ապահովադրի և Ապահովագրված անձի համար՝ Վկայագրում նշված էլեկտրոնային հասցեն, իսկ Վկայագրի կնքումից հետո Ապահովադրի կողմից Ապահովագրողին այլ էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ վերջին անգամ տրամադրված էլեկտրոնային հասցեն,

2) Տուժողի և նրա իրավահաջորդի համար՝ նրանց կողմից վերջին անգամ որևէ ապահովագրական ընկերության հետ կնքված ԱՊՊԱ պայմանագրի վկայագրում նշված էլեկտրոնային հասցեն, իսկ կոնկրետ դեպքի հատուցման գործընթացում տուժողի (նրա իրավահաջորդի) կողմից ծանուցման համար այլ էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ միայն տվյալ գործընթացի շրջանակներում՝ այդ էլեկտրոնային հասցեն:

8. Սույն կանոնների 7-րդ կետով սահմանված բացառություն համարվող դեպքերի համար որպես ծանուցման եղանակ կարող է համարվել՝

1) ծանուցումն առձեռն հանձնելը՝ ստացման մասին ստորագրությամբ, կամ համապատասխան անձի կողմից գրավոր տրամադրած հասցեով պատվիրված նամակով ուղարկելը՝ հետպատասխան տեղեկացմամբ,

2) ծանուցումը տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում տեղադրելը՝ պայմանով, որ Ապահովագրողը տվյալ անձին գրավոր ձևով հայտնել է ինտերնետային կայքի հասցեն, տվյալ անձի համար ստեղծված բաժին մուտք գործելու համար անհրաժեշտ մուտքային տվյալները և բաժնից օգտվելու կարգը: Ընդ որում, եթե Ապահովագրողը ծանուցումը տեղադրելուց հետո մեկ օրվա ընթացքում ծանուցման ընթերցման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացում չի ստանում, ապա պարտավոր է դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում ծանուցվող անձին հեռախոսազանգի միջոցով տեղեկացնել ծանուցման տեղադրման մասին:

9. Պայմաններով նախատեսված կարգով ծանուցումներն անձի կողմից համարվում են պատշաճ ստացված և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետներն Ապահովագրողի կողմից սկսվում են հաշվարկվել՝

1) էլեկտրոնային փոստով ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից,

2) ծանուցումն ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվանից,

3) պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ հետպատասխան տեղեկացման մեջ նշված ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը հետ վերադարձվելու հաջորդող օրվանից,

4) ծանուցումը տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում տեղադրվելու դեպքում՝

ա. ծանուցումը տեղադրելուց հետո 1 օրվա ընթացքում ծանուցման ընթերցման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացումը ստանալու դեպքում՝ ծանուցումն ընթերցելուն հաջորդող օրվանից,

բ. Ապահովագրողի կողմից հեռախոսազանգով տեղեկացնելու օրվան հաջորդող օրվանից, եթե Ապահովագրողը ծանուցումը տեղադրելուց հետո 1 օրվա ընթացքում ծանուցման ընթերցման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկացում չի ստանում և ծանուցվող անձին հեռախոսազանգի միջոցով է տեղեկացնում ծանուցման տեղադրման վերաբերյալ:

10. Ապահովադիրը ծանուցումն ստանալուց անմիջապես հետո պարտավորվում է ծանուցմամբ նախատեսված տեղեկատվությունը փոխանցել Ապահովագրված անձին՝ կրելով վերջինի կողմից ծանուցումը փաստացի չստանալու հետ կապված բացասական հետևանքների համար պատասխանատվության ռիսկը:

11. Ծանուցումները հավաստող փաստաթղթերն և/կամ նյութերն Ապահովագրողի մոտ պահպանվում են՝

1) գույքային վնասներով հատուցումների դեպքում՝ հատուցման (տվյալ գործով վերջին հատուցման) վճարման ամսաթվից հետո առնվազն 3 տարի ժամկետով,

2) անձնական վնասներով հատուցումների դեպքում՝ հատուցման (տվյալ գործով վերջին հատուցման) վճարման ամսաթվից հետո առնվազն 10 տարի ժամկետով:

12. Ծանուցումները հավաստող փաստաթղթեր և/կամ նյութեր են համարվում՝

1) ծանուցումն էլեկտրոնային փոստով ուղարկման դեպքում՝ համակարգչում և/կամ փոստային սերվերում պահպանված՝ ուղարկված էլեկտրոնային ծանուցումը, որտեղ պետք է հստակ տեսանելի լինի, թե ում, երբ և ինչ տեղեկատվություն է ուղարկվել,

2) ծանուցումն ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ ստացման մասին հասցեատիրոջ ստորագրության նշումով ծանուցման մեկ օրինակը կամ պատճենը,

3) ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ տվյալ ծանուցման գծով ստացված հետպատասխան տեղեկացման կտրոնը,

4) ծանուցումը տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում տեղադրելու դեպքում՝ ապահովագրողի սերվերի և/կամ համակարգչի վրա ծանուցումը տեղադրելը, ընթերցելը և դրանց ժամկետները հավաստող լոգերը, իսկ սույն կանոնների 9-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերությունում նախատեսված դեպքերում՝ նաև հեռախոսային ձայնագրությունը:

ԲԱԺԻՆ 2. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

13. ԱՊՊԱ պայմանագրերը կնքվում են անձի բանավոր կամ գրավոր դիմումի (պահանջի) համաձայն և Օրենքի և Պայմանների շրջանակներում նրա համար նախընտրելի պայմաններով, բացառությամբ ապահովագրավճարի վճարման կարգին և ժամկետին վերաբերող պայմանի, որը համաձայնեցվում է կողմերի միջև: Ապահովագրական ընկերությունները պարտավոր են անձի պահանջը և Պայմաններով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան՝ մինչև հինգ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում 1 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հինգ և ավելի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի կնքման դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, վերջինիս հետ կնքել ԱՊՊԱ պայմանագիր կամ 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր պատասխանել մերժման մասին՝ նշելով նաև մերժման հիմնավորումները:

14. Ապահովագրական ընկերություններն ԱՊՊԱ պայմանագրերը կնքում են անձամբ կամ իրենց կողմից լիազորված անձանց՝ ներառյալ ապահովագրական գործակալների միջոցով: ԱՊՊԱ պայմանագիրը Պայմաններով նախատեսված կարգով և դեպքերում կարող է կնքվել նաև Ապահովադրի կողմից առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով՝ ներառյալ ինտերնետային կայքի, վճարային համակարգերի, տերմինալների միջոցով և բջջային հավելվածներով (այսուհետ՝ առցանց էլեկտրոնային եղանակով կնքում): Ապահովագրական ընկերության կողմից պատշաճ լիազորված անձի՝ ներառյալ ապահովագրական գործակալի, հետ ցանկացած եղանակով՝ ներառյալ առցանց էլեկտրոնային եղանակով կնքված, ԱՊՊԱ պայմանագիրն Ապահովադրի տեսանկյունից բոլոր դեպքերում համարվում է տվյալ ապահովագրական ընկերության հետ պատշաճ կնքված ԱՊՊԱ պայմանագիր, և ապահովագրական ընկերության լիազորված անձի կողմից իր լիազորությունների շրջանակն անցնելու, զեղծարարության, պայմանագիրը փաստացի չկնքվելու և (կամ) չհաշվառվելու և նմանատիպ այլ հանգամանքների բացասական հետևանքների ռիսկը կրում է ապահովագրական ընկերությունը, բացառությամբ սույն կանոնների 20-րդ կետի համաձայն Ապահովադրի վրա դրված ռիսկերի:

15. Վկայագրի ձևը և հավելվածը, Վկայագիրը կազմելու տեխնիկական պահանջները և Վկայագիրը լրացնելու հրահանգը, ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի ձևը սահմանված են սույն կանոններին կից **Հավելված 1**-ով (Հավելված 1.1՝ ԱՊՊԱ վկայագրի ձևը և հավելվածը, Հավելված 1.2՝ ԱՊՊԱ Վկայագիրը կազմելու տեխնիկական պահանջները և ԱՊՊԱ վկայագիրը լրացնելու հրահանգը, Հավելված 1.3՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, Հավելված 1.4՝ ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի ձևը): Ապահովագրողին (ներառյալ իր լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի միջոցով) արգելվում է ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար ապահովադրից (ապահովադրի լիազորված անձից) պահանջել Հավելված 1.3-ով չնախատեսված տեղեկություններ կամ փաստաթղթեր կամ այդպիսի տեղեկությունների (փաստաթղթերի) ներկայացումը համարել ԱՊՊԱ պայմանագրի կնքման նախապայման կամ այդպիսի տեղեկությունների (փաստաթղթերի) չներկայացման հիմնավորմամբ ԱՊՊԱ պայմանագիրը կնքել ապահովադրի (ապահովադրի լիազորված անձի) վիճակը վատթարացնող պայմաններով:

16. Վկայագրի դաշտերը լրացվում են սույն կանոնների Հավելված 1.3-ով նախատեսված՝ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված և Ապահովադրի կողմից ներկայացված (հայտարարված) տեղեկությունների հիման վրա: ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար Հավելված 1.3-ով նախատեսված՝ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրավճարի հաշվարկման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությունը Ապահովագրողը կարող է նաև օրինական եղանակով ինքնուրույնաբար իրական ժամանակի ռեժիմում ստանալ ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից, եթե վերջինս ինտեգրված է այլ համապատասխան տեղեկատվական համակարգերի հետ, այդ համակարգերը ներառում են պահանջվող համապատասխան տեղեկատվությունը և ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին առկա չեն տեխնիկական խոչընդոտներ նշված տվյալների ստացման համար: Այդ դեպքում Ապահովագրողը Վկայագրի կնքման համար հիմք է ընդունում ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից ստացված տվյալները՝ անկախ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկությունների հետ դրանց անհամապատասխանության հանգամանքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից ստացված տեղեկատվությունը չի համապատասխանում Վկայագրի լրացման համար անհրաժեշտ ձևակերպումների դասակարգմանը կամ ստացված տեղեկատվությունը (օրինակ՝ շարժիչի հզորությունը) պայմանական նշան է կամ 0 կամ բացասական մեծություն: Նման դեպքերում Ապահովագրողը հիմք է ընդունում Ապահովադրի կողմից ներկայացված և Հավելված 1.3-ով նախատեսված փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը, իսկ այդ փաստաթղթերում անհրաժեշտ տեղեկատվության բացակայության դեպքում՝ համանման ավտոտրանսպորտային միջոցի համար կիրառելի համապատասխան տեղեկատվությունը:

17. ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է Ապահովադրի համար նախընտրելի՝ Օրենքով թույլատրված ժամկետով, բացառությամբ սույն կանոնների Հավելված 1-ի համաձայն Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի բացակայության հիմքով նույնացման (VIN) համարի կամ թափքի համարի հիման վրա կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի, որոնք կնքվում են բացառապես տասն օր ժամկետով:

18. Վկայագրի Ապահովագրողի օրինակին պարտադիր կցվում են Ապահովադրի կողմից ներկայացված և Հավելված 1.3-ով նախատեսված այն փաստաթղթերի պատճենները, որոնք հիմք են հանդիսացել Վկայագրի համապատասխան դաշտերի լրացման համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Վկայագրում տեղեկատվության լրացման համար հիմք են հանդիսացել սույն կանոնների 16-րդ կետով սահմանված կարգով ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից ինքնաշխատ ստացված տվյալները, որոնց մասով փաստաթղթերի պատճենները Վկայագրին կցելը պարտադիր չէ:

19. Առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիրը կարող է կնքվել եթե բավարարված են հետևյալ պայմանները միաժամանակ՝

1) ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է անձամբ Ապահովադրի կողմից,

2) Ապահովադրի կողմից մուտքագրվող տեղեկատվության շրջանակը ներառում է և սահմանափակված է՝

ա. ֆիզիկական անձ Ապահովադիրների դեպքում՝ Ապահովադրի հանրային ծառայությունների համարանիշով և անձը հաստատող փաստաթղթի համարով, իրավաբանական անձ Ապահովադիրների դեպքում՝ Ապահովադրի հարկ վճարողի հաշվառման համարով,

բ. Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշով,

գ. Հավելված 1.3-ում Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկատվության ցանկով:

3) ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար սույն կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկություններից բացի մնացած բոլոր տեղեկությունները սույն կանոնների 16-րդ կետով սահմանված կարգով ինքնաշխատ ստացվում են ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից, որոնց հետ Ապահովադիրը համաձայն է,

4) Առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագրի կնքման հնարավորությունները Ապահովագրողի կողմից սահմանափակված չեն Օրենքով և Պայմաններով նախատեսված ապահովադիրների և ավտոտրանսպորտային միջոցների որևէ խմբի, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման նպատակի, պայմանագրի գործողության ժամկետի և Ապահովադրի համար նախընտրելի ցանկացած այլ պայմանով կնքման համար՝ բացառությամբ ապահովագրավճարի վճարման կարգին և ժամկետին վերաբերող պայմանի:

20. ԱՊՊԱ պայմանագիրն առցանց էլեկտրոնային եղանակով Ապահովադիրների կողմից կնքվելու դեպքում Հավելված 1.3-ով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում Ապահովագրողին, և դրանց տիրապետելու և այդ տվյալներն առցանց մուտքագրելու միջոցով Օրենքի համաձայն համապատասխան ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասություն ունենալու

համապատասխան հիմքերի առկայության, ինչպես նաև մուտքագրվող տվյալների՝ իրականությանը համապատասխանելու համար պատասխանատվությունը (բացասական հետևանքների ռիսկը) կրում է Ապահովադիրը:

21. ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո Վկայագրի հետ միասին Ապահովադրին (նրա կողմից լիազորված անձին) տրվում է Բյուրոյի կայքում հրապարակված համաձայնեցված հայտարարագրի նմուշը: Ապահովադրի կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու դեպքում Ապահովադիրը (նրա կողմից լիազորված անձը) պայմանագիրը կնքելուց հետո ցանկացած ժամանակ, կարող է համաձայնեցված հայտարարագրի նմուշն ստանալ Ապահովագրողի գլխամասային գրասենյակից կամ մասնաճյուղերից կամ նրա ցանկացած գործակալից: Բոլոր դեպքերում ցանկացած անձ համաձայնեցված հայտարարագրի նմուշը կարող է ներբեռնել Բյուրոյի պաշտոնական կայքից: Բյուրոն իր կայքում մշտապես ապահովում է համաձայնեցված հայտարարագրի նմուշի հրապարակումը և դրա լրացման հրահանգը:

22. ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար անձի կողմից ներկայացված կամ Ապահովագրողի կողմից այլ անձից օրինական եղանակով ինքնուրույնաբար ստացած փաստաթղթերը (դրանցում պարունակվող տվյալները) կամ տեղեկությունները կարող են օգտագործվել կամ փոխանցվել այլ ապահովագրական ընկերություններին կամ այլ անձանց այդ փաստաթղթերում կամ ԱՊՊԱ պայմանագրում արտացոլված տեղեկությունների ստուգման, որևէ ԱՊՊԱ պատահարում պատճառված վնասների հատուցման գործընթացը հավուր պատշաճի իրականացնելու, հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի արդյունավետ իրականացման և ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: Նշված տվյալները կարող են օգտագործվել ԱՊՊԱ պայմանագրի վերակնքման մասին ապահովադրին տեղեկացնելու նպատակով միայն տվյալ ԱՊՊԱ պայմանագրի կողմ հանդիսացող ապահովագրական ընկերության կողմից:

23. ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվում են Ապահովագրողի և Ապահովադրի միջև Հավելված 1.4-ով սահմանված ձևով համաձայնագիր կնքելու միջոցով, որի նկատմամբ, կիրառելիության դեպքում, տարածվում են ԱՊՊԱ պայմանագրի կնքման նկատմամբ սահմանված պահանջները: Ընդ որում, ԱՊՊԱ պայմանագրում չի կարող փոփոխվել Ապահովադիրը և (կամ) Ապահովագրողը:

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

24. ԱՊՊԱ պայմանագրի համաձայն՝ ապահովագրական պատահար (ԱՊՊԱ պատահար) է համարվում Ապահովադրի և (կամ) Ավտոտրանսպորտային միջոցը (միջոցները) օրինական հիմքերով տիրապետող այլ անձի (անձանց) կողմից տվյալ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով տուժող անձին (անձանց) հետևյալ վնասների պատճառումը.

1) անձնական վնասներ, որոնք ներառում են տուժողի առողջությանը պատճառված վնասները և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտները), ինչպես նաև տուժողի մահը,

2) գույքին պատճառված վնասներ, որոնք ներառում են տուժողի ավտոտրանսպորտային միջոցի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը, տուժողին պատկանող այլ գույքի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը, ինչպես նաև վնաս պատճառող ավտոտրանսպորտային միջոցին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող և սեփականության իրավունքով տուժողին պատկանող գույքին պատճառված վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը:

25. ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անհապաղ հայտնել ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս սույն կանոնների Հավելված 1.3-ով նախատեսված՝ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված և (կամ) Ապահովադրի կողմից ներկայացված (հայտարարված) այն տեղեկություններում կատարված փոփոխությունների մասին, որոնք հիմք են ընդունվել ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ընդ որում, սույն գլխի իմաստով՝ ապահովագրական ռիսկի մեծանալու վրա որակապես ազդող փոփոխություններ են համարվում այն փոփոխությունները, որոնց պայմաններում ԱՊՊԱ պայմանագրի կնքման դեպքում ենթակա կլիներ վճարման ավելի բարձր ապահովագրավճար: ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անհապաղ հայտնել նաև Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի փոփոխության մասին և Ապահովագրողի հետ կնքել Վկայագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիր:

26. Ապահովագրական ռիսկի փոփոխման վրա որակապես ազդող փոփոխության մասին տեղեկացված Ապահովագրողն կամ Ապահովադիրն իրավունք ունեն միմյանցից պահանջելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Օրենքի և Պայմանների շրջանակներում փոփոխել Վկայագրի պայմանները կամ ճշգրտել ապահովագրավճարի չափն ԱՊՊԱ պայմանագրի գործողության մնացած ժամանակահատվածի համար:

27. Ապահովադրի կողմից սույն գլխով սահմանված տեղեկացման պարտականությունը պատշաճ կերպով չկատարվելու դեպքում փոփոխված հանգամանքները համարվում են առկա ԱՊՊԱ պայմանագիրը կնքելու պահից, որոնց մասին սուտ տեղեկություններ հայտնած Ապահովադիրը կրում է Պայմաններով նախատեսված պատասխանատվությունը:

ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐԸ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

28. ԱՊՊԱ պատահար չեն համարվում և ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում ենթակա չեն հատուցման Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով հետևյալ վնասների պատճառումը՝

1) անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

2) ահաբեկչական, ռազմական գործողությունների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

3) վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,

4) տուժողի դիտավորության հետևանքով տվյալ տուժողին պատճառված վնասները,

5) պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին պատճառված վնասները,

6) արվեստի գործերին, թանկարժեք զարդերին, քարերին կամ մետաղներին պատճառված վնասները,

7) բեռների փոխադրման պայմանագրով փոխադրվող բեռներին պատճառված վնասները,

8) օրենքով նախատեսված այլ վնասներ:

29. Ապահովագրական պատահարի ժամանակ տվյալ ԱՊՊԱ պայմանագրով տուժող չեն համարվում և դրա շրջանակներում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում՝

1) Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը և պատահարի պահին այն տիրապետող այլ անձը, ինչպես նաև Ապահովադիրը,

2) անձինք, ովքեր գտնվել են հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած Ավտոտրանսպորտային միջոցի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք տեղյակ չեն եղել, որ Ավտոտրանսպորտային միջոցը հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած է եղել, կամ Ավտոտրանսպորտային միջոցի մեջ գտնվել են իրենց կամքին հակառակ.

3) Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ընտանիքի անդամները՝ գույքին պատճառված վնասների մասով:

30. ԱՊՊԱ ոլորտում չհատուցվող գումարի չափը 0 դրամ է:

ԳԼՈՒԽ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ

31. Ապահովագրական գումարը ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի կողմից տուժողին կամ օրենքով և (կամ) Պայմաններով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

32. ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրական գումարը մեկ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված մեկ ապահովագրական պատահարի համար կազմում է՝

1) անձնական վնասների համար՝

ա. 3.300.000 Հայաստանի Հանրապետության դրամ ըստ յուրաքանչյուր տուժողի,

բ. 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ գումար ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի:

2) գույքին պատճառված վնասների համար՝ 1.800.000 Հայաստանի Հանրապետության դրամ գումար յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար:

33. Եթե Օրենքի և Պայմանների համաձայն՝ հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշվում է ապահովագրական պատահարի համար

սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ՝ վնասների ընդհանուր գումարում յուրաքանչյուրի գույքին պատճառված վնասների չափի համամասնության կիրառմամբ:

34. Եթե Օրենքի և Պայմանների համաձայն՝ հատուցման ենթակա անձնական վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշվում է ապահովագրական պատահարի համար սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ՝ վնասների ընդհանուր գումարում նրանց յուրաքանչյուրին պատճառված անձնական վնասների չափի համամասնության կիրառմամբ: Ընդ որում՝ սույն կետի համաձայն հաշվարկված՝ յուրաքանչյուր տուժողին վճարման ենթակա գումարը չի կարող գերազանցել ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը: Այն դեպքում, երբ տուժողներից մեկի (մի քանիսի) համար, սույն կետի համաձայն, համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս տուժողներին պատճառված վնասները՝ այդ վնասներին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

35. Ապահովագրական գումարը պայմանագրի գործողության ընթացքում ենթակա չէ նվազեցման՝ անկախ այդ ընթացքում ապահովագրական պատահարների դիմաց վճարված ապահովագրական հատուցումների ծավալից և քանակից:

ԳԼՈՒԽ 9. ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

36. ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանությունը՝ ներառյալ հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, ռիսկայնության գործակիցների թույլատրելի արժեքները, Բոնուս-Մալուս համակարգի կիրառման կարգը, Բոնուս-Մալուս գործակիցների մեծությունները և ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրավճարի սահմանման և դրա կիրառման գործընթացի նկատմամբ նվազագույն պահանջները սահմանված են սույն կանոններին կից **Հավելված 2**-ով:

ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

37. Ապահովագրավճարը վճարվում է Վկայագրում նշված չափով և ժամկետներում:

38. Վկայագրով սահմանված ապահովագրավճարի վճարումը կարող է կատարվել՝

1) կանխիկ կերպով՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի դրամարկղ կամ բանկային հաշվին վճարելու, իսկ ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին վճարվող ապահովագրավճարը (դրա մասը)՝ ապահովագրական գործակալին առձեռն հանձնելու դեպքում՝ Վկայագրում գումարի վճարման մասին նշում կատարելու, ինչպես նաև Պայմաններով նախատեսված կարգով և դեպքերում առցանց էլեկտրոնային եղանակով՝ վճարային տերմինալների միջոցով վճարում կատարելու միջոցով,

2) անկանխիկ կերպով՝ Վկայագրում կամ Ապահովագրողի կողմից ներկայացված վճարման հաշվում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու՝ ներառյալ Պայմաններով նախատեսված կարգով և դեպքերում առցանց եղանակով ինտերնետային

կայքի, վճարային համակարգերի կամ բջջային հավելվածների միջոցով փոխանցումներ կատարելու միջոցով:

39. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ Վկայագրով կարող են սահմանվել ապահովագրավճարի վճարման միանվագ կամ տարաժամկետ վճարման տարբերակներից որևէ մեկը:

ԳԼՈՒԽ 11. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

40. ԱՊՊԱ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե Ապահովագրողը պայմանագրում որպես գործողության ժամկետի սկիզբ չի նշում կնքմանը կամ նախորդ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող օրը, կամ եթե Ապահովագրողը և Ապահովադիրը փոխադարձ համաձայնությամբ չեն սահմանում, որ այն ուժի մեջ է մտնում նշված ժամկետներից ավելի ուշ ժամկետում: Ամեն դեպքում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների, ինչպես նաև այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագրերն ուժի մեջ են մտնում կնքման պահից, բայց ոչ շուտ, քան Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը իրավասու պետական մարմնի կողմից նոր սեփականատիրոջ անունով գրանցելու և Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառելու պահից, եթե Ապահովադրի գրավոր պահանջով Վկայագրում գործողության ժամկետի սկզբի համար ավելի ուշ ժամկետ նշված չէ:

41. ԱՊՊԱ պայմանագրի գործողությունը դադարում է Վկայագրի «Ապահովագրության ժամկետը» դաշտում նշված ավարտի ժամկետը լրանալու պահից:

42. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերը, յուրաքանչյուր հիմքի դեպքում ԱՊՊԱ պայմանագրի դադարման պահը և ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման դեպքերը, ինչպես նաև վերադարձման ենթակա ապահովագրավճարի հաշվարկման կարգն ու պայմանները սահմանված են **Հավելված 3**-ով:

43. Այն դեպքում, երբ Վկայագրում նշված են մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցներ և Հավելված 3-ով սահմանված պայմանագրի դադարման հիմքերը վերաբերում են դրանցից ոչ բոլորին, ապա պայմանագիրը դադարեցվում է միայն տվյալ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) մասով, և Հավելված 3-ով սահմանված հաշվարկները կատարվում են միայն այդ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) մասով:

ԳԼՈՒԽ 12. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳՐԻ ՎՆԱՍՄԱՆ (ԽՈՏԱՆՄԱՆ), ԿՈՐՍՏԻ, ՀԱՓՇՏԱԿՄԱՆ ԿԱՄ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ

44. Վկայագրի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացման դեպքում այն ենթակա է փոխարինման կրկնօրինակով:

45. Վկայագրի կրկնօրինակ ստանալու նպատակով Ապահովադիրը կորստից հետո ցանկացած ժամկետում դիմում է Ապահովագրողին և Ապահովագրողի որևէ բանկային հաշվին վճարում է Ապահովագրողի կողմից «Կրկնօրինակ վկայագրի տրամադրման համար» սահմանված ծառայության վճարը (առկայության դեպքում), որը չի կարող 1.000 ՀՀ դրամից ավել լինել:

46. Սույն կանոնների 45-րդ կետով սահմանված վճարումն ստանալուց հետո Ապահովագրողն Ապահովադրին տրամադրում է Վկայագրի կրկնօրինակը՝ Վկայագրի վրա սահմանված կարգով կատարելով «ԿՐԿՆՕՐԻՆԱԿ» նշագրում՝ Ապահովագրողի գրասենյակ Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) ներկայանալուց և համապատասխան անդորրագիրը ներկայացնելուց անմիջապես հետո կամ Ապահովադրի համապատասխան պահանջից անմիջապես հետո, եթե Ապահովագրողն այդ ծառայության համար որևէ վճար չի սահմանել:

ԲԱԺԻՆ 3.
ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԸ

ԳԼՈՒԽ 13. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

47. Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր են ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Վկայագրի վրա նշված հեռախոսահամարով (հեռախոսահամարներից որևէ մեկով), որոնց շուրջօրյա հասանելիությունը (ներառյալ ոչ աշխատանքային օրերին) և հեռախոսազրույցի ձայնագրումը Ապահովագրողը պարտավորվում է ապահովել: Ընդ որում, սույն կանոնների 50-րդ կետով նախատեսված դեպքերում անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) տեղեկացնելու պահանջը տարածվում է պատահարում մեղավոր Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի նկատմամբ, և վերջինի այդ պարտավորությունը ծագում է համաձայնեցված հայտարարագիրը կողմերի կողմից ստորագրելուց, սույն կանոնների բ.1-րդ պարբերությունով նախատեսված գործողությունը կատարելուց և երթևեկելի մասը պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցներից ազատելուց հետո:

48. Սույն կանոնների 47-րդ կետում նշված պահանջից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին անհապաղ ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը, կամ Ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը կրում են Ապահովագրողին նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման (ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին տեղեկացվելու) դեպքում Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պարտավոր են անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին հայտնել Ապահովագրողին:

49. Սույն կանոնների 47-րդ կետի համաձայն Ապահովագրողին զանգահարելու դեպքում Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պետք է Ապահովագրողի պահանջով (հեռախոսով հարցման

դեպքում) հայտնի ապահովագրական պատահարի վերաբերյալ նախնական տեղեկատվություն: Ընդ որում, Ապահովագրողը սույն կանոնների 50-րդ կետով նախատեսված դեպքերում կարող է պահանջել տեղեկատվություն միայն համաձայնեցված հայտարարագրում լրացման ենթակա տվյալների վերաբերյալ, իսկ մյուս դեպքերում կարող է պահանջել տեղեկատվություն առնվազն հետևյալի վերաբերյալ՝

1) *Վկայագրի համարը,*

2) *տեղեկատվություն տրամադրելու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վե*րաբերյալ Ապահովադրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) հայտնի ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝

ա. ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրը և ժամը,

բ. ապահովագրական պատահարի վայրը (ճշգրիտ հասցեն կամ հնարավորինս պարզ նկարագրությունը),

գ. ապահովագրական պատահարի մասնակիցների վերաբերյալ տվյալներ (առնվազն նրանց քանակը, հեռախոսահամարները, պատահարին մասնակից այլ ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը),

դ. ապահովագրական պատահարի համառոտ նկարագիրը, պատահարի հետևանքով պատճառված վնասների բնույթը, վնասի մոտավոր մեծությունը (հնարավորության դեպքում),

3) տեղեկատվություն սույն կանոնների 51-րդ կետում նշված համաձայնեցված հայտարարագիր կազմելու մասին համաձայնության առկայության կամ դրա բացակայության վերաբերյալ:

50. Եթե ապահովագրական պատահարում ներգրավված է միայն երկու ավտոտրանսպորտային միջոց, վնաս է պատճառվել միայն այդ ավտոտրանսպորտային միջոցներին, ապահովագրական պատահարի արդյունքում տուժողին պատճառված վնասի դիմաց տուժողի կամ տուժողի ավտոտրանսպորտային միջոցն օրինական տիրապետող անձի կողմից ակնկալվող հատուցման չափը չի գերազանցում 50.000 ՀՀ դրամը (որը սահմանվում է, որպես Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափ), և Ապահովագրողի հետ կնքված ԱՊՊԱ պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձն ընդունում է, որ պատահարի առաջացման մեջ միակ մեղավորն ինքն է, ապա պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցներն օրինական հիմքով տիրապետող անձինք փոխադարձ համաձայնությամբ կարող են, առանց Ապահովագրողի լրացուցիչ համաձայնության, լրացնել համաձայնեցված հայտարարագիրը: Սույն կետով սահմանված պայմաններին չբավարարող դեպքերի համար Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը Պայմաններով սահմանվում է 0 ՀՀ դրամ:

51. Եթե ապահովագրական պատահարում ներգրավված է միայն երկու ավտոտրանսպորտային միջոց, վնաս է պատճառվել միայն գույքին, և ապահովագրական պատահարի արդյունքում տուժողին պատճառված վնասի չափը Ապահովադրի

(ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) և ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի գնահատականներով չի գերազանցում 200.000 ՀՀ դրամը, ապա Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահարում ներգրավված մյուս կողմի հետ փոխադարձ համաձայնության գալու և ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին սույն կանոնների 49-րդ կետում սահմանված տեղեկություններ հայտնելու ընթացքում Ապահովագրողի (Ապահովագրողի ներկայացուցչի) համաձայնությունը ստանալու դեպքում լրացնում են համաձայնեցված հայտարարագիրը: Համաձայնեցված հայտարարագիր կազմելու համար Ապահովագրողի անհամաձայնության դեպքում համաձայնեցված հայտարարագիրը չի լրացվում և ապահովագրական պատահարի հետ կապված հարցերը կարգավորվում են Օրենքով և Պայմաններով սահմանված՝ վնասի չափը և մեղավորության աստիճանը որոշելու ընդհանուր կանոններով:

52. Ապահովագրողի ներկայացուցիչը պարտավոր է սույն կանոնների 49-րդ կետով սահմանված տեղեկատվության ստացման ընթացքում կամ դրանից անմիջապես հետո՝ հեռախոսով, կամ պատահարի վայրում Ապահովադրին և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին տեղեկացնել համաձայնեցված հայտարարագիր լրացնելու վերաբերյալ իր համաձայնության կամ անհամաձայնության մասին: Ընդ որում, պատահարի վայրում համաձայնեցված հայտարարագիր լրացնելու վերաբերյալ համաձայնություն տալու դեպքերում ապահովագրողի ներկայացուցիչը պարտավոր է այդ մասին նշում կատարել համաձայնեցված հայտարարագրի վրա:

53. Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի (Ապահովագրողի ներկայացուցչի) և Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) գործողությունները և համապատասխանաբար ապահովագրա-կան հատուցման գործընթացները տարանջատվում են հետևյալ խմբերի՝

1) սույն կանոնների 50-րդ կամ 51-րդ կետի համաձայն լրացվել է համաձայնեցված հայտարարագիր (այսուհետ նաև՝ Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթաց),

2) սույն կանոնների 50-րդ կամ 51-րդ կետի համաձայն չի լրացվել համաձայնեցված հայտարարագիր (այսուհետ՝ Ստանդարտ հատուցման գործընթաց):

54. *<u>Ստանդարտ հատուցման գործընթացի</u>* դեպքում՝

1) Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) սույն կանոնների 47-րդ և 49-րդ կետերում նշված գործողությունները ձեռնարկելուց բացի, պարտավոր է նաև՝

ա. ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովադրին (ավտոտրանսպոր-տային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) տրված ցուցումներին, եթե այդպիսիք կան: Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) կողմից

կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը:

բ. առանց Ապահովագրողի համաձայնության՝ չլքել ապահովագրական պատահարի վայրը և չտեղաշարժել ավտոտրանսպորտային միջոցը կամ ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի ներկայացուցչի, իսկ Ապահովագրողի ներկայացուցչի պահանջով՝ նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ժամանումը և ապահովագրական պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) տեղաշարժերը պայմանավորված են եղել մարդկանց անվտանգությունը ապահովելու և (կամ) օրենքի պահանջները կատարելու նկատառումներով,

բ) տեղաշարժերը պայմանավորված են եղել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ցուցումներով,

գ) Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս Պայմաններում նշված ժամկետում չի ժամանել պատահարի վայր կամ հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և համապատասխան հետագա ցուցումներ է տվել Ապահովադրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) և տուժողին (տուժողներին),

գ. համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և (կամ) մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին,

դ. Ապահովագրողի պահանջով տրամադրել ապահովագրական պատահարի պահին Վկայագրում նշված համապատասխան ավտոտրանսպորտային միջոցը տիրապետած անձի անձը հաստատող փաստաթուղթը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը (բացառությամբ այն անձանց, ում օրենքի համաձայն չի հատկացվում այդպիսի համարանիշ), վարորդական վկայականը և տվյալ ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական զննությունն անցած լինելու փաստը հավաստող փաստաթղթեր: Ընդ որում, ավտոտրանսպորտային միջոցը տիրապետած անձի համար սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում համարվում է, որ ապահովագրական պատահարի պահին ավտոտրանսպորտային միջոցը տիրապետել է Ապահովադիրը (իրավաբանական անձ Ապահովադրի գործադիր մարմնի ղեկավարը, այլ Ապահովադրի դեպքում՝ վերջինի անունից պայմանագիր կնքած մարմնի ղեկավարը),

ե. Ապահովագրողի պահանջով՝ ապահովագրական պատահարից անմիջապես հետո անցնել ալկոհոլի կամ թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի օտագործման փաստի վերաբերյալ քննություն,

զ. ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և (կամ) փորձագետին տրամադրել համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի զննում անցկացնելու հնարավորություն,

է. մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ փորձաքննության արդյունքների վերաբերյալ իր և ապահովագրական պատահարի մյուս մասնակցի (մասնակիցների) համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են մարդկանց անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով կամ հրահանգով: Նման դեպքերում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող այլ անձը պարտավոր է վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներն սկսելուց առնվազն մեկ օր առաջ տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին) (հնարավորության առկայության դեպքում),

ը. առանց Ապահովագրողի համապատասխան փորձաքննության արդյունքների կամ համաձայնության չընդունել մեղավորությունը և (կամ) չստանձնել պարտավորություններ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ պատահարի հետ կապված հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ: Սույն ենթակետով նախատեսված պարտականությունը չի բացառում պատահարի մասնակից վարորդների իրավունքը փոխադարձ համաձայնությամբ օրենքով սահմանված կարգով հրաժարվելու վարչական վարույթ իրականացնելու պահանջից,

թ. տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել պատահարը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցվելու վերաբերյալ և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր,

ժ. ապահովագրական պատահարի մյուս մասնակցին (մասնակիցներին) տրամադրել ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ բոլոր տվյալները, մասնավորապես իր անունը, ազգանունը, բնակության վայրը, ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անունը և ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը (եթե Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) չի հանդիսանում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր), Ապահովագրողի անվանումը, հասցեն, Վկայագրի համարը և ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ այլ տվյալներ,

ժա. տուժողին (տուժողներին) տեղեկացնել, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել սույն ենթակետի «ա», «բ», «գ», «զ», «է», «ժ» և «ժբ» պարբերություններով սահմանված պահանջները,

ժբ. Ապահովագրողին տրամադրել ապահովագրական պատահարի վերաբերյալ իրեն հայտնի և իր տրամադրության տակ առկա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը:

2) *Ապահովագրողը* պարտավոր է՝

ա. ապահովագրական պատահարի մասին սույն կանոնների 47-րդ կետի համաձայն Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից իրեն տեղեկացման դեպքում, անհրաժեշտ հանգամանքները ճշտելուց հետո, Ապահովադրին և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին տեղեկացնել պատահարի վայր ժամանելու կամ չժամանելու իր մտադրության մասին,

բ. պատահարի վայր ժամանելու իր մտադրությունը Ապահովադրին և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին հայտնելու դեպքում պատահարի վայրում ապահովել իր ներկայացուցչի (ներկայացուցիչների) ժամանումը ոչ ուշ, քան պատահարի վերաբերյալ ստացված հեռախոսազանգի պահից հետո՝ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզկենտրոններում 35 րոպեի, իսկ դրանցից դուրս՝ 80 րոպեի ընթացքում:

55. *<u>Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքում</u>*՝

1) սույն կանոնների համապատասխանաբար 47-րդ և 49-րդ կամ 50-րդ կետերում նշված գործողություններից բացի *Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը* պարտավոր է՝

ա. մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի հետ կազմել Պայմաններով նախատեսված և սահմանված կարգի համաձայնեցված հայտարարագիր,

բ. ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովա-դրին տրված ցուցումներին (եթե նման ցուցումներ տրվել են): Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Պայմաններով սահմանված համաձայնեցված հայտարարագրի միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը:

բ.1. սույն կանոնների 50-րդ կետում սահմանված պայմաններին բավարարող պատահարների դեպքերում՝ մինչև պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները տեղաշարժելը որևէ կերպ՝ այդ թվում ցանկացած հեռախոսի միջոցով, առնվազն երեք անգամ լուսանկարել կամ տեսանկարահանել դրանք: Ընդ որում, լուսանկարահանումը (տեսանկարահանումը) պետք է կատարվի այնպես, որպեսզի լուսանկարներն (տեսանյութն) առնվազն արտացոլեն երկու ավտոտրանսպորտային միջոցների հետվթարային փոխադարձ դիրքերը և պատահարի հետևանքով դրանցից յուրաքանչյուրի ընդհանրական վնասվածքները:

գ. մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ Ապահովագրողի եզրակացության վերաբերյալ իր և (կամ) ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են մարդկանց անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով և հրահանգով: Նման դեպքերում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող այլ անձը պարտավոր է վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներն սկսելուց առնվազն մեկ օր առաջ տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին) (հնարավորության առկայության դեպքում),

դ. տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել պատահարը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցվելու մասին և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր,

ե. ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և (կամ) փորձագետին տրամադրել համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի զննումն անցկացնելու հնարավորություն,

զ. ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձին տեղեկացնել, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել սույն ենթակետի «ա», «բ», «գ», «ե» և «է» պարբերություններով սահմանված պահանջները,

է. համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և (կամ) մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին:

ԲԱԺԻՆ 4. ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ԳԼՈՒԽ 14. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ԵՎ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

56. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի

մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ Բյուրոյի որակավորած փորձագետների (այսուհետ՝ փորձագետ) կողմից, բացառությամբ համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացում պատահարի առաջացման մեջ մեղավորության որոշման: Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացում պատահարի առաջացման մեջ ամբողջությամբ մեղավոր է համարվում համաձայնեցված հայտարարագրում որպես մեղավոր կողմ նշված անձը:

57. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում պատճառված անձնական վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ պատճառված անձնական վնասների չափը գնահատում է տուժողին բժշկական օգնություն ցուցաբերած կամ նրա առողջությունը վերականգնած բժշկական կամ այլ հաստատությունը կամ մասնագետը, իսկ անձի մեղավորության աստիճանը՝ փորձագետը:

58. Սույն կանոնների 50-րդ կամ 51-րդ կետով նախատեսված կարգով համաձայնեցված հայտարարագիր լրացնելու և ապահովագրական հատուցման գործընթացը համապատասխանաբար համաձայնեցված հայտարարագրի համար Պայմաններով սահմանված պահանջներով կարգավորելու դեպքում տուժողին հատուցվող գումարը չի կարող գերազանցել համապատասխանաբար 50.000 դրամը և 200.000 ՀՀ դրամը:

59. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամուտների) հատուցման չափը, ինչպես նաև տուժողի մահվան դեպքում օրենքի համաձայն նրա մահվան հետևանքով վնասների հատուցման իրավունք ունեցող անձանցից յուրաքանչյուրի կրած վնասի հատուցման չափը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝ հաշվի առնելով Օրենքի պահանջները:

ԳԼՈՒԽ 15.
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

60. Ապահովագրական հատուցում ստանալու համար տուժողը կամ նրա իրավահաջորդը պետք է Ապահովագրողին դիմի ապահովագրական պատահարի օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

61. Եթե տուժողը կամ նրա իրավահաջորդը սույն կանոնների 60-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետում ապահովագրական հատուցում ստանալու համար չի դիմում՝ պատահարի հետևանքով անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում լինելու պատճառով, որն անհնարին է դարձրել տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Ապահովագրողին սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելը կամ գույքին պատճառված վնասների առկայության դեպքում՝ այդ գույքի պահպանման համար պատասխանատու անձի (գույքը նրա մոտ գտնվել է այն պահպանելու, օգտագործելու կամ նրա համաձայնությամբ այլ նպատակներով) կողմից

պատահարի մասին չտեղեկացնելու պատճառով, ապա նրա համար եռամսյա ժամկետը սկսում է գործել ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելն անհնարին դարձնող հանգամանքների վերացման կամ ապահովագրական պատահարի մասին տեղեկանալու օրվանից սկսած: Տուժողը կամ նրա իրավահաջորդը կրում են ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու ապացուցման պարտականությունը:

62. *Համաձայնեցված հայտարարագրով հատուցման* գործընթացի դեպքում տուժողը (տուժողի իրավահաջորդը) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և նյութերը ՝

1) ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողի սահմանած ձևով դիմում,

2) դիմումը սույն կանոնների 60-րդ կետով նախատեսված ժամկետներում չներկայացվելու դեպքում՝ տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից եռամսյա ժամկետում դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ,

3) տուժողի և Ապահովադրի (ապահովագրական պատահարի պահին ավտոտրանս-պորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) միջև կնքված համաձայնեց-ված հայտարարագիրը, ընդ որում, սույն կանոնների 50-րդ կետով նախատեսված դեպքերում սույն ենթակետով սահմանված փաստաթուղթը պետք է ներկայացված լինի ապահովագրական պատահարից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

4) տուժողի անձը հաստատող փաստաթուղթը,

5) վնասված ավտոտրանսպորտային միջոցի և (կամ) այլ գույքի նկատմամբ տուժողի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) կամ այլ ապացույցներ,

6) տուժողի իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է տուժողի իրավահաջորդը,

7) ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող փաստաթուղթը,

8) սույն կանոնների 50-րդ կետում նկարագրված դեպքում՝ նաև պատահարի վայրում Պայմանների համաձայն կատարված լուսանկարների կամ տեսանյութի էլեկտրոնային տարբերակը (ընդ որում՝ անհրաժեշտության դեպքում Ապահովագրողը տեխնիկապես ապահովում է սույն ենթակետով նախատեսված նյութի ստացումը դիմում ներկայացնողից:

63. *Ստանդարտ հատուցման գործընթացի* դեպքում տուժողը (տուժողի իրավահաջորդը) ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողի սահմանած ձևով դիմում, որը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված,

2) դիմումը սույն կանոնների 60-րդ կետով նախատեսված ժամկետներում չներկայացվելու դեպքում՝ տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից եռամսյա ժամկետում

դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ,

3) տվյալ պատահարի գծով հարուցված գործով ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը, իսկ դրա բացակայության դեպքում՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կազմած արձանագրությունը (եզրակացությունը, որոշումը), ընդ որում ներկայացվող արձանագրությանը (եզրակացությանը, որոշմանը) Պայմաններով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ: Սույն ենթակետով նախատեսված արձանագրության ներկայացման պահանջը չի տարածվում տվյալ պատահարի գծով ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի և քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից որևէ փաստաթուղթ չկազմվելու այն դեպքերի վրա, երբ պատահարը Պայմաններով սահմանված կարգով արձանագրվել է պատահար սպասարկողի կողմից, կամ Պայմաններով նախատեսված տեսանկարահանող սարքով (սարքերով) նկարահանվել են պատահարին ներգրավված բոլոր ավտոտրանսպորտային միջոցների (իրենց հաշվառման համարանիշերով) հետվթարային դիրքերը, ինչպես նաև պատահարի տեղի ունենալու պահը, կամ համապատասխան ծրագրով ստեղծվել և ուղարկվել են սահմանված պահանջներին բավարարող տվյալ իրավիճակի համար նախատեսված բոլոր լուսանկարները,

4) տուժողի իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է տուժողի իրավահաջորդը,

5) ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ,

6) սույն կանոնների 64-րդ, 66-րդ և (կամ) 67-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը և այլ ապացույցները՝ կախված պատճառված վնասի բնույթից, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան վնասի չափը որոշվել է պատահարի գծով հարուցված գործով ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտով, որի դեպքում ներկայացվում է միայն դատական ակտը,

7) անձը հաստատող փաստաթուղթ:

64. Տուժողի առողջությանը պատճառված վնասների հատուցման համար ներկայացվում են՝

1) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն), բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի եզրակացությունը կամ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վկայակոչում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքները,

2) բժշկական տեղեկանք և (կամ) կոնսուլտացիոն եզրակացություն և (կամ) քաղվածք ամբուլատոր քարտից և (կամ) էպիկրիզ,

3) բժշկական հաստատությունների կողմից տրված վճարման հաշիվներ, իսկ սույն կանոնների 86-րդ կետով նախատեսված դեպքերում՝ կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր,

4) տուժողի առողջությանը պատճառված վնասների հետևանքով աշխատավարձի (եկամուտների) կորստի դեպքում՝ կորցրած աշխատավարձի (եկամուտների) չափը հաստատող փաստաթղթեր,

5) տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:

65. Պայմաններով սույն կանոնների 64-րդ կետով նախատեսված փաստաթղթերի նկատմամբ կարող են սահմանվել նվազագույն պահանջներ՝ որպես հատուցման ենթակա ծախսերի փաստացի ապացուցվածության չափանիշներ:

66. Տուժողի մահվան հետ կապված հատուցում ստանալու համար ներկայացվում են՝

1) օրենքի համաձայն տուժողի մահվան հետևանքով վնասների հատուցման իրավունք ունեցող անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր,

2) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն), բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի եզրակացությունը կամ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վկայակոչում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքները,

3) մահվան վկայական,

4) կերակրողին կորցնելու հետ կապված վնասի հատուցման չափը հավաստող փաստաթղթեր (եթե պահանջվում է հատուցել կերակրողին կորցնելու հետ կապված ծախսերը),

5) տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:

67. Տուժողի գույքին պատճառված վնասների հատուցման պահանջ ներկայացվելու դեպքում ներկայացվում են՝

1) ավտոտրանսպորտային միջոցի, ինչպես նաև այլ գույքի վնասման (ոչնչացման) դեպքում՝ վնասվածքի վերականգնման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե Ապահովագրողը չի իրականացրել պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի կամ գույքի զննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով,

2) ավտոտրանսպորտային միջոցի, ինչպես նաև այլ գույքի կորստի դեպքում՝ կորստի փաստը հավաստող փաստաթղթեր,

3) տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:

68. Ապահովագրական հատուցում ստանալու համար սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են պատճենահանված վիճակում՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք իրավական նշանակություն ունեն բացառապես տվյալ պատահարի գծով ապահովագրական հատուցում ստանալու համար, որոնք ներկայացվում

են բնօրինակով: Ընդ որում, փաստաթղթերի պատճենները ներկայացվելու դեպքում Ապահովագրողին ցույց է տրվում նաև դրանց բնօրինակները, որի մասին համապատասխան գրառում է կատարվում պատճենի վրա: Որևէ փաստաթղթի բնօրինակը օրենքի հիման վրա երրորդ անձի տիրապետության տակ գտնվելու ուժով այն Ապահովագրողին ցույց տալու անհնարինության դեպքում ներկայացվում է դրա պատճենը՝ ստորագրված երրորդ անձի իրավասու անձի կողմից և «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 16.
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

69. Բացառությամբ այն դեպքերի, երբ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, ապահովագրողը տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Պայմաններով նախատեսված դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին և դիմումն ստանալուց (սույն կետի համաձայն՝ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը համարվում է ստացված Պայմանների և Բյուրոյի կանոնների համաձայն՝ տվյալ տեսակի վնասի հատուցման համար ներկայացման ենթակա բոլոր փաստաթղթերը պատշաճ կերպով Ապահովագրողի կողմից ստացվելու պահին) հետո՝

1) ստանդարտ հատուցման գործընթացի դեպքում առավելագույնը տասն աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ապահովել ապահովագրական պատահարի առաջացման պատճառների և պատահարի արդյունքում տուժողին պատճառված վնասների փորձաքննությունը և փորձաքննության արդյունքների մասին ծանուցել տուժողին (նրա իրավահաջորդին), Ապահովադրին և ապահովագրված անձին՝ տրամադրելով այդ փորձաքննությունների վերաբերյալ փորձագետների եզրակացությունների (հաշվետվությունների) պատճենները և ծանուցման մեջ նշելով դրանք բողոքարկելու կարգը, ժամկետները և պայմանները,

2) համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքում առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ապահովել ապահովագրական պատահարի արդյունքում տուժողին պատճառված վնասների փորձաքննությունը և փորձաքննության արդյունքների մասին ծանուցել տուժողին (նրա իրավահաջորդին), Ապահովադրին և ապահովագրված անձին՝ տրամադրելով այդ փորձաքննության վերաբերյալ փորձագետի եզրակացության (հաշվետվության) պատճենը և ծանուցման մեջ նշելով այն բողոքարկելու կարգը, ժամկետները և պայմանները:

70. Ապահովագրողը սույն կանոնների 69-րդ կետով նախատեսված ծանուցումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, լրացուցիչ փորձաքննություն չնշանակվելու և կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում 1 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում՝ ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը ընդունելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

71. Եթե ըստ Ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և Ապահովագրողի՝ փորձագետի եզրակացությունը պարզ կամ ամբողջական չէ, ապա նրանք սույն կանոնների 69-րդ կետով սահմանված ծանուցման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունեն փոխադարձ համաձայնությամբ նշանակելու լրացուցիչ փորձաքննության անցկացում: Լրացուցիչ փորձաքննության անցակցման ժամկետը սահմանվում է Ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ, սակայն ոչ ավելի, քան 3 ամիս: Լրացուցիչ փորձաքննությունն անցկացվում է Ապահովագրողի միջոցների հաշվին: Լրացուցիչ փորձաքննության նշանակման դեպքում՝ լրացուցիչ փորձաքննության ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովագրողը փորձաքննության արդյունքների մասին ծանուցում է Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին): Ապահովագրողը սույն կետով նախատեսված ծանուցումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, կրկնակի փորձաքննության պահանջ չներկայացվելու դեպքում 1 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը 1 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

72. Եթե Ապահովադիրը, ապահովագրված անձը, տուժողը (նրա իրավահաջորդը) կամ Ապահովագրողը համաձայն չէ սույն կանոնների 69-րդ կամ 71-րդ կետով սահմանված կարգով անցկացված փորձաքննության արդյունքներին, ապա նա սույն կանոնների համապատասխանաբար 69-րդ կամ 71-րդ կետով սահմանված ծանուցման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունի պահանջելու կրկնակի փորձաքննության անցկացում՝ Բյուրոյին գրավոր պահանջ ներկայացնելու միջոցով: Կրկնակի փորձաքննությունն անցկացվում է այն անցկացնելու պահանջ ներկայացրած անձի միջոցների հաշվին: Միևնույն ապահովագրական պատահարի սահմաններում պայմանագրով նախատեսված կրկնակի փորձաքննության պահանջ կարող է ներկայացվել միայն մեկ անգամ:

73. Կրկնակի փորձաքննության անցկացումից հետո լրացուցիչ փորձաքննություն նշանակվել չի կարող, և կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: Կրկնակի փորձաքննության ավարտից հետո 3 աշխատան-քային օրվա ընթացքում Ապահովագրողն ընդունում է գրավոր որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը 1 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին): Ընդ որում սույն կետի իմաստով կրկնակի փորձաքննության ավարտի օր է համարվում Ապահովագրողի կողմից կրկնակի փորձաքննության արդյունքները ստանալու օրը:

74. Սույն կանոնների 69-73-րդ կետերով սահմանված դրույթները չեն տարածվում այն դեպքերի նկատմամբ, երբ պատահարի հետ կապված հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, և ուժի մեջ է մտել այդպիսի գործն

ըստ էության լուծող դատական ակտ, որով որոշվել է պատահարի առաջացման պատճառը և տուժողի գույքին պատճառված կամ անձնական վնասի չափը: Նման դեպքերում Ապահովագրողը Պայմաններով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին: Այն դեպքում, երբ պատահարի հետ կապված հարուցված գործով ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտով որոշվել է միայն պատահարի առաջացման պատճառը, ապա սույն կանոնների 69-73-րդ սահմանված դրույթները տարածվում են միայն տուժողի գույքին պատճառված կամ անձնական վնասի մասով:

75. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումը մերժվում է (սույն կետի 1)-ին կամ 5)-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ նվազեցնում է վճարման ենթակա ապահովագրական հատուցումը) հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) տուժող անձը կամ նրա իրավահաջորդը տվյալ վնասի գծով արդեն իսկ հատուցում է ստացել այլ ԱՊՊԱ պայմանագրի հիման վրա կամ Բյուրոյից (անկախ հատուցման գումարը վճարված լինելու հանգամանքից) կամ վնասը պատճառած անձից և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձից կամ նրանց անունից՝ բացառությամբ, եթե նշված անձանց միջև առկա է գրավոր ձևով կնքված և գործող համաձայնագիր կամ գրավոր հայտարարություններ, համաձայն որոնց՝ տուժողը կամ նրա իրավահաջորդը ստանձնում է կողմերի միջև առկա այլ հարաբերություններով չպայմանավորված պարտավորություն ապահովելու նախապես իր կողմից ստացված և (կամ) նախապես իր համար վճարված գումարների վերադարձը վնաս պատճառած անձին և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձին: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողը հատուցված գումարը (բացառությամբ Վկայագրում նշված չհատուցվող գումարի չափով մեկ անգամ վճարված գումարից) մասհանում է տուժողին պատճառված փաստացի վնասից,

2) տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից խախտվել են Պայմաններով սահմանված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու ժամկետները և չի հիմնավորվել սույն կանոնների 61-րդ կետում նշված հանգամանքների առկայությունը,

3) տուժողը կամ նրա իրավահաջորդը սույն կանոնների 68-րդ կետի համաձայն փաստաթղթերի ցանկը ստանալուց հետո եռամսյա ժամկետում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ տեղեկություններ և (կամ) փաստաթղթեր, որոնք վերացնում են տվյալ տուժողին ապահովագրական հատուցման վճարումը մերժելու կամ ավելի պակաս չափով հատուցելու Բյուրոյի կանոններով նախատեսված հիմքերը,

4) պատահարի առաջացման մեջ բացակայում է ապահովագրված անձի մեղավորությունը, եթե տուժող է հանդիսանում պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը կամ օրինական հիմքով տիրապետող այլ անձ,

5) պատահարի առաջացման մեջ առկա է տուժողի կամ տուժողի ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի ոչ դիտավորյալ մեղքը՝ տվյալ տուժողի գույքին պատճառված վնասների մասով, ընդ որում, հատուցումը մերժվում է (նվազեցվում է) տուժողի կամ տուժողի ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի մեղքի աստիճանին համամասնորեն, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերի,

6) մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ փորձաքննության արդյունքների վերաբերյալ ապահովագրական պատահարի մասնակիցների համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության՝ մասնակի կամ ամբողջությամբ վերանորոգվել կամ ապամոնտաժվել է տուժողի՝ պատահարի արդյունքում վնասված գույքը, իսկ վերանորոգումը կամ ապամոնտաժումը մարդկանց անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով կամ հրահանգով պայմանավորված լինելու դեպքում՝ տուժողը կամ նրա իրավահաջորդը գույքի վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներն սկսելուց առնվազն մեկ օր առաջ չի տեղեկացրել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին) և չի ապացուցել չտեղեկացման անհնարինությունը,

7) օրենքով կամ Պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

76. Ապահովագրողը ապահովագրական հատուցման վճարումը սույն կանոնների 75-րդ կետի 3)-րդ ենթակետով նախատեսված՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը չներկայացնելու հիմքով կարող է մերժել միայն, եթե տուժողը կամ նրա իրավահաջորդը չի հիմնավորել, որ սահմանված ժամկետում փաստաթղթերի չներկայացումը պայմանավորված է եղել դրանց ներկայացման անհնարինությամբ (ներառյալ՝ դատական գործընթացներով), և որ փաստաթղթերը ներկայացվել են անհնարինությունը պայմանավորող հանգամանքների վերացումից հետո՝ 3 ամսվա ընթացքում: Բոլոր դեպքերում Ապահովագրողը չի կարող մերժել ԱՊՊԱ պայմանագրով հատուցման վճարումը, եթե նախքան որոշում ընդունելը չի ձեռնարկել հետևյալ գործողությունները՝

1) մերժման որոշում ընդունելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ ծանուցել է Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին)՝ ներկայացված փաստաթղթերը ոչ բավարար լինելու մասին և դրանց ներկայացման համար նշել է Պայմաններով սահմանված վերջնաժամկետը և այդ ժամկետում փաստաթղթերի չներկայացման հետևանքները,

2) ձեռնարկել է բոլոր իրեն հասանելի քայլերը պատահարի հետ կապված Օրենքով և Պայմաններով նախատեսված փաստաթղթերը ստանալու նպատակով (հարցումներ տարբեր մարմիններին, նամակներ, պահանջներ և այլն):

77. Ապահովագրողը ապահովագրական հատուցման վճարումը սույն կանոնների 75-րդ կետի 6)-րդ ենթակետով նախատեսված հիմքով կարող է մերժել, եթե ապացուցում է, որ գույքի վերանորոգումը կամ ապամոնտաժումն անհնարին են դարձրել ապահովագրական պատահարի իրական պատճառների կամ գույքին պատճառված իրական վնասի չափի որոշումը և եթե Ապահովագրողի կողմից չեն խախտվել սույն կանոնների 78-րդ կետով նախատեսված ժամկետները:

78. Պայմաններով սահմանված փորձաքննությունը նշանակելու, ծանուցումներ ուղարկելու, ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում ընդունելու կամ փորձաքննության անցկացման ժամկետները կետանցելու դեպքում Ապահովագրողը տուժողին կամ նրա իրավահաջորդին յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարում է տույժ՝

1) ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումն ընդունելու ժամկետները կետանցելու դեպքում՝ ապահովագրական հատուցման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով,

2) փորձաքննություն նշանակելու, ծանուցումներ ուղարկելու, ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշումներն ընդունելու կամ փորձաքննության անցկացման ժամկետները կետանցելու դեպքում՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված ԱՊՊԱ պայմանագրով տուժողի կրած տվյալ տեսակի վնասի համար նախատեսված ապահովագրական գումարի 0.1 տոկոսի չափով:

79. Եթե առկա է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով հարուցված վարչական գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա սույն կանոնների 78-րդ կետում նշված ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը: Կասեցված ժամանակահատվածի համար սույն կանոնների 78-րդ կետում նախատեսված տույժը չի գանձվում: Ընդ որում, ապահովագրական պատահարի հիման վրա հարուցված քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կամ 2-րդ (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ) կետով սահմանված հիմքով կասեցվելը դիտվում է որպես հարուցված գործն ըստ էության լուծող դատական ակտի չընդունում, որի դեպքում Օրենքի 21-րդ հոդվածի ուժով պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է փորձագետի (բժշկական կամ այլ հաստատության կամ մասնագետի) կողմից:

ԳԼՈՒԽ 17.
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

80. Տուժողի գույքին պատճառված վնասները հատուցվում են տուժողին (նրա ներկայացուցչին կամ ժառանգին) համապատասխան գումար վճարելու ձևով կամ պատճառված վնասի վերականգնման միջոցով: Տարբերակների ընտրությունն իրականացվում է տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) կողմից: Ընդ որում, եթե Ապահովագրողի փորձագետի եզրակացության համաձայն՝ վնասի վերականգնումը հնարավոր կամ ողջամիտ չէ, ապա Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարվում է համապատասխան գումար վճարելու միջոցով:

81. Տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) կողմից որպես ապահովագրական հատուցման ստացման ձև գույքին պատճառված վնասի վերականգնումն ընտրելու դեպքում Ապահովագրողը տուժողին (նրա ներկայացուցչին կամ ժառանգին) է տրամադրում համապատասխան գույքը վերանորոգող այն կազմակերպությունների

ցանկը, որոնց հետ Ապահովագրողը համագործակցում է, իսկ տուժողը (նրա ներկայացուցիչը կամ ժառանգը) այդ ցանկից ընտրում է որևէ կազմակերպություն: Տուժողը (նրա ներկայացուցիչը կամ ժառանգը) իրավունք ունի մինչև ապահովագրական հատուցման ստացման ձևի վերաբերյալ իր ընտրության կատարումը Ապահովագրողից պահանջել համապատասխան գույքը վերանորոգող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ Ապահովագրողը համագործակցում է:

82. Սույն կանոնների 81-րդ կետով նախատեսված դեպքերում տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) ընտրած կազմակերպությունը Ապահովագրողին առաջադրում է վնասված գույքի վերանորոգման ժամկետ: Եթե կազմակերպության առաջարկած ժամկետը ընդունելի է տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) համար, ապա Ապահովագրողը իր, կազմակերպության և տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) միջև պայմանավորված կարգով և ժամկետներում կազմակերպում է վնասված գույքի վերանորոգումը և դրա դիմաց վճարումը կազմակերպությանը: Եթե տուժողը (նրա ներկայացուցիչը կամ ժառանգը) համաձայն չէ կազմակերպության առաջադրած ժամկետների հետ, ապա նա կարող է ընտրել Ապահովագրողի ցանկում ներառված այլ կազմակերպություն կամ պահանջել Ապահովագրողից՝ ապահովագրական հատուցումը իրեն վճարել համապատասխան գումարը վճարելու ձևով:

83. Սույն կանոնների 80-րդ կետով նախատեսված դեպքում տուժողի կողմից որպես ապահովագրական հատուցման ստացման ձև համապատասխան գումարի վճարումն ընտրելու դեպքում ապահովագրական հատուցումը Ապահովագրողի կողմից վճարվում է միանվագ՝ ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

84. Անձնական վնասների դեպքում ապահովագրական հատուցումը Ապահովագրողի կողմից վճարվում է միանվագ՝ ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով հատուցման վերաբերյալ որոշում ընդունելու և դրան հաջորդող ամիսների կորցրած աշխատավարձի (եկամուտների) և տուժողի մահվան (կերակրողին կորցնելու մասով) դեպքում ապահովագրական հատուցումների վճարման դեպքերի:

85. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով հատուցման վերաբերյալ որոշում ընդունելու և դրան հաջորդող ամիսների կորցրած աշխատավարձի (եկամուտների) և տուժողի մահվան (կերակրողին կորցնելու մասով) դեպքերում ապահովագրական հատուցման վճարումն Ապահովագողի կողմից կատարվում է ամենամսյա վճարումների տեսքով մինչև օրենքի համաձայն համապատասխան հատուցումն ստանալու իրավունքի դադարումը կամ ապահովագրական գումարի սպառումը, ընդ որում առաջին վճարումը կատարվում է ապահովագրական հատուցումը վճարելու մասին Ապահովագրողի որոշումը ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

86. Անձի առողջությանը պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումը վճարվում է անմիջապես բժշկական հաստատությանը՝ բացառությամբ հետևյալ ծախսերի գծով հատուցումների դեպքերի.

1) Օրենքի 12-րդ հոդվածի 6-8-րդ մասերով նախատեսված ծախսերը,

2) բժշկի ցուցումով բուժման շարունակականության (ամբուլատորկամ ստացիոնար ռեաբիլիտացիոն բուժման) ապահովմանն ուղղված ծախսերը, այդ թվում՝ վերականգնողական (ռեաբիլիտացիոն) միջոցառումների, դեղեր ձեռք բերելու, մասնագիտացված տնային խնամքի, ախտորոշիչ ամբուլատոր հետազոտությունների, սանատոր կուրորտային բուժման, պրոթեզավորման, անվասայլակի, տեխնիկական այլ միջոցների, բժշկական պարագաների ձեռքբերման հետ կապված ծախսերը,

3) տուժողի առողջության վերականգնման համար տուժողի կամ այլ անձի կողմից արդեն իսկ կատարված ծախսերը, եթե տուժողը կամ վճարումն իրականացնող անձը հիմնավորում են իրենց կողմից վճարման իրականացման անհրաժեշտությունը:

ԲԱԺԻՆ 5.
ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԳԼՈՒԽ 18.
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

87. Ապահովագրողն հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի՝

1) *վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե*՝

ա. նա ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցը վարել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո,

բ. նա առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը կամ խուսափել է ալկոհոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց,

գ. նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով զրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ սույն կետի 2)-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված դեպքի: Ընդ որում՝ սույն պարբերության և սույն կետի 2)-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված դեպքերում ապահովագրական պատահարի պահին անձի վարորդական վկայականի գործողության ժամկետի ավարտված լինելը կամ վարորդական վկայականը վարորդի մոտ չգտնվելը ինքնին հիմք չէ սույն պարբերության հիմքով հետադարձ պահանջի իրավունքի կիրառման համար,

դ. սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,

2) *վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (Ապահովադրի) նկատմամբ, եթե*՝

ա. ավտոտրանսպորտային միջոցը վնասի պատճառման պահի դրությամբ չի անցել տեխնիկական զննություն, և պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը կարող էր բացահայտվել տեխնիկական զննություն անցնելու դեպքում,

բ. սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,

գ. ավտոտրանսպորտային միջոցի վարումը վստահել է այն վարելու իրավունք չունեցող անձին և գիտեր կամ կարող էր իմանալ, որ այդ անձը չունի վարելու իրավունք:

դ. պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել Ապահովագրողին ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին մինչև ապահովագրական պատահարը: Ընդ որում, սույն պարբերության իմաստով՝ էական նշանակություն ունեցող հանգամանքներ են համարվում Ապահովադրի կողմից ներկայացված՝ սույն կանոնների Հավելված 1.3-ով նախատեսված այն փաստաթղթերի և տեղեկությունների կեղծ լինելը, որոնք հիմք են ընդունվել ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար, և որոնց՝ իրականությանը համապատասխանող պայմաններով ԱՊՊԱ պայմանագրի կնքման դեպքում ենթակա կլիներ վճարման ավելի բարձր ապահովագրավճար: Բոլոր դեպքերում, Ապահովագրողի կողմից սույն պարբերության հիմքով հետադարձ պահանջ չի կարող կիրառվել ինքնին այն տվյալների սխալ լինելու համար, որոնք սույն կանոնների 16-րդ կետով նախատեսված դեպքերում և կարգով ստացվել են ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգից, կամ որոնց հիման վրա պայմանագիրը կնքվել է այդ նույն կետով սահմանված դեպքերում և կարգով՝ ներկայացված փաստաթղթերում և ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգում անհրաժեշտ տեղեկատվության բացակայության հիմքով համանման ավտոտրանսպորտային միջոցի համար կիրառելի համապատասխան տեղեկատվությունը հիմք ընդունելու արդյունքում:

88. Եթե սույն գլխի համաձայն՝ Ապահովագրողը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք Ապահովագրողի նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

ԲԱԺԻՆ 6.
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 19. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԵԼՔԸ

89. ԱՊՊԱ պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

90. Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

91. ԱՊՊԱ պայմանագրի կնքմամբ Ապահովադիրը հաստատում է իր տեղեկացվածությունն առ այն, որ ապահովագրական խարդախությունների կատարումն առաջացնում է Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառում:

ԳԼՈՒԽ 20. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

92. Մինչև Հավելված 1.1-ով սահմանված նոր՝ առանց լիազորված տիրապետողների նշումի Վկայագրի տիպային օրինակի գործողության մեջ մտնելու օրը կնքված և այդ օրվա

դրությամբ գործող ԱՊՊԱ պայմանագրերը համարվում են ի սկզբանե առանց սահմանափակումների լիազորված տիրապետողներով կնքված ԱՊՊԱ պայմանագրեր՝ Ապահովագրողի համար չառաջացնելով դրանով պայմանավորված որևէ լրացուցիչ ապահովագրավճար պահանջելու իրավունք: Նման Վկայագրերում որպես լիազորված տիրապետող չնշված անձանց կողմից Ավտոտրանսպորտային միջոցների տիրապետումն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ ԱՊՊԱ պայմանագրի դադարեցման կամ հետադարձ պահանջի կիրառման համար:

Հավելված 1
«ԱՊՊԱ հիմնարար պայմաններ» կանոնների

ՀԱՎԵԼՎԱԾ 1.1. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳՐԻ ԵՎ ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

Ապահովագրական ընկերության լոգոտիպը	ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ	ID կոդ

ՎԿԱՅԱԳՐԻ N		S									

Ապահովագրող՝ Ապահովագրական ընկերության անվանումը, գտնվելու վայրը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, ՀՀ ԿԲ-ում գրանցման համարը, լիցենզիայի համարը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշիվը:

Ապահովագրության դաս		***Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն***
1.	**Ապահովադիր**	
2.	**Ավտոտրանսպորտային միջոցների (Ա/մ) քանակ**	**Մեկից ավելի Ա/մ-ների դեպքում՝ սույն Վկայագրի 3-րդ, 4-րդ և 5-րդ դաշտերը՝ համաձայն կից Հավելվածի:**

3.	**Ավտոտրանսպորտային միջոց**	**Ա/մ տեսակը**	**մակնիշը, տիպարը**	**հաշվառման համարանիշը**
		☐ **կցորդով** ☐ **առանց կցորդի**		
		հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը	**շարժիչի հզորությունը**	
		թափքի համարը	**նույնացման համարը (VIN)**	

4.	**Շահագործման նպատակ**	☐ **անձնական**	☐ **ծառայողական**	☐ **տաքսի**
		☐ **հանրային տրանսպորտ**	☐ **առևտրային օգտագործման**	☐ **այլ**

5.	**Լիազորված տիրապետողներ**	
6.	**Ապահովագրության ժամկետ**	**սկիզբ՝ ___/___/ 20___ ժ __.__ ավարտ՝ ___/___/20___ ժ __.__** **օօ. աա. տտ. օօ. աա. տտ.**
7.	**Ապահովագրական գումար (յուրաքանչյուր Ա/մ գծով)**	**Անձնական վնասների համար՝** **3 300 000** ՀՀ դրամ՝ ըստ յուրաքանչյուր տուժողի, **10 000 000** ՀՀ դրամ՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի, **Գույքին պատճառված վնասների համար՝** **1 800 000** ՀՀ դրամ՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի
8.	**Ապահովագրավճար**	**_____ (_____) ՀՀ դրամ**
9.	**Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ**	

☐ **կանխիկ**	☐ **անկանխիկ**
☐ **ապահովագրավճարը վճարված է ամբողջությամբ սույն պայմանագրի կնքման պահին**	**Ապահովագրավճարը վճարվում է հետևյալ**

☐_____ **ՀՀ դրամի չափով ապահովագրավճարը վճարված է սույն պայմանագրի կնքման պահին, իսկ ապահովագրավճարի մնացած մասը՝ հետևյալ կարգով՝** _____:	**կարգով և ժամկետում (ժամկետներում)՝** _____:

10. Ապահովագրական պատահարներ (ռիսկեր)

Ապահովադրի և (կամ) սույն վկայագրում նշված ավտոտրանսպորտային միջոցը (միջոցները) օրինական հիմքերով տիրապետող այլ անձի կողմից սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ՀՀ կամ ԼՂՀ տարածքում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) օգտագործման հետևանքով երրորդ անձանց անձնական կամ գույքին վնասների պատճառումը՝ բացառությամբ ԱՊՊԱ պայմաններով նախատեսված վնասների:

11. Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ

Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով [Հեռախոսահամարներ] հեռախոսահամարներով:

12. Ապահովագրության պայմանները

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները (սույն Պայմանագրում, նաև՝ ԱՊՊԱ պայմաններ) սահմանված են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի (այսուհետ՝ Բյուրո) իրավասու մարմնի կողմից հաստատված և Բյուրոյի՝ www.paap.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված կանոններով, որոնք կիրառվում են անմիջականորեն: ԱՊՊԱ պայմանների առանձին դրույթներ կարող են փոփոխվել, վերացվել կամ լրացվել բացառապես այն ընդունած մարմնի կամ Կենտրոնական բանկի կողմից՝ օրենքով սահմանված կարգով, որի մասին Ապահովադիրը տեղեկանում է Բյուրոյի վերոհիշյալ ինտերնետային կայքից, որտեղ փոփոխությունները և (կամ) լրացումները հրապարակվում են գործողության մեջ մտնելու պահից առնվազն տասն օր առաջ:

13. Այլ դրույթներ

13.1 Սույն պայմանագրի կնքմամբ հայտնում եմ իմ համաձայնությունն (լիազորում եմ) առ այն, որ
ա) սույն վկայագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումները համարվեն իմ կողմից պատշաճ ստացված՝ ԱՊՊԱ պայմաններով նախատեսված կարգով և դեպքերում,
բ) սույն պայմանագրի կնքման համար ներկայացված փաստաթղթերը (դրանցում պարունակվող տվյալները) կարող են օգտագործվել կամ փոխանցվել այլ ապահովագրական ընկերություններին, Բյուրոյին կամ այլ անձանց այդ փաստաթղթերում կամ ԱՊՊԱ պայմանագրում արտացոլված տեղեկությունների ստուգման, որևէ ԱՊՊԱ պատահարում ինձ պատճառված վնասների հատուցման գործընթացը հավուր պատշաճի իրականացնելու, հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի արդյունավետ իրականացման և ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: Նշված տվյալները կարող են օգտագործվել ԱՊՊԱ պայմանագրի վերակնքման մասին ինձ տեղեկացնելու նպատակով միայն սույն պայմանագրի կողմ հանդիսացող ապահովագրական ընկերության կողմից:
13.2 Տեղեկացված եմ, որ ապահովագրական խարդախությունների կատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառում:

14.	**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ** _____	**ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ** _____
		Ստացա համաձայնեցված հայտարարագրի նմուշը, ստացել, ծանոթացել և համաձայն եմ ԱՊՊԱ պայմաններին: Պարտավորվում եմ ԱՊՊԱ պայմանագրերի հետ առնչվող հարաբերություններում հանդես գալ (ներկայանալ) ինձ տրամադրած հանրային ծառայությունների համարանիշով:
	_____ **ստորագրություն**	_____ **ստորագրություն**
15.	**Պայմանագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝ ___/___/20___**	
16.	Սույն պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Ապահովագրողը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր _____ :	

Նշումներ

N	S								ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

1.	Ա/մ տեսակը	մակնիշը, տիպարը	հաշվառման համարանիշը
	☐ կցորդով ☐ առանց կցորդի		
	հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը	շարժիչի հզորությունը	
	թափքի համարը	նույնացման համարը (VIN)	
	Շահագործման նպատակ	☐ անձնական ☐ հանրային տրանսպորտ	☐ ծառայողական ☐ առևտրային օգտագործման ☐ այլ
	Ապահովագրավճար (տվյալ Ա/մ գծով)	_____(_____) ՀՀ դրամ	
	Նշումներ		
	Լիազորված տիրապետողներ		

2.	Ա/մ տեսակը	մակնիշը, տիպարը	հաշվառման համարանիշը
	☐ կցորդով ☐ առանց կցորդի		
	հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը	շարժիչի հզորությունը	
	թափքի համարը	նույնացման համարը (VIN)	
	Շահագործման նպատակ	☐ անձնական ☐ հանրային տրանսպորտ	☐ ծառայողական ☐ առևտրային օգտագործման ☐ այլ
	Ապահովագրավճար (տվյալ Ա/մ գծով)	_____(_____) ՀՀ դրամ	
	Նշումներ		
	Լիազորված տիրապետողներ		

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

N	Տ									ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Լիազորված տիրապետողներ		Լիազորված տիրապետողների վերաբերյալ տվյալներ
1.		
2.		
3.		

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 1.2. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԸ

1. **ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**	
1.	Վկայագիրը, ինչպես նաև սույն հրահանգով նախատեսված դեպքում Վկայագրի հավելվածը կազմվում (ստորագրվում) են երկու օրինակից, որոնցից մեկ օրինակը, տրվում է Ապահովադրին (Ապահովադրի ներկայացուցչին), իսկ մյուս օրինակը պահվում է Ապահովագրողի (Ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) մոտ: Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու դեպքում Ապահովադիրն ստանում է Վկայագրի (հավելվածի)՝ Ապահովագրողի կողմից ֆաքսիմիլային վերարտադրությամբ կնքված և ստորագրված օրինակը, իսկ Ապահովագրողն իր մոտ էլեկտրոնային կամ թղթային տեսքով պահպանում է Վկայագրի՝ իր կողմից ֆաքսիմիլային ստորագրությամբ ձևավորված տարբերակը: Ընդ որում, այդ դեպքում Վկայագրի՝ Ապահովագրողի օրինակում Ապահովադրի ստորագրությունը համարվում է դրված (ԱՊՊԱ պայմանագիրը համարվում է Ապահովադրի կողմից պատշաճ կերպով ստորագրված) Ապահովադրին նույնականացնող տվյալները համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրվելու ուժով:
2.	Վկայագիրը լրացվում է հայերենով, բացառությամբ փաստաթղթերի ոչ հայատառ սերիաների և Ավտոտրանսպորտային միջոցի համարանիշերի:
3.	Վկայագրի տվյալները լրացվում են մեկ էջի վրա:
4.	Մեկ պայմանագրով մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրելու և (կամ) լիազորված տիրապետողների քանակը մեկից ավելի լինելու դեպքերում Վկայագրին կցվում է Վկայագրի համապատասխան հավելվածը (հավելվածները):
5.	Վկայագիրը և դրա հավելվածները լրացվում են համակարգչի կամ այլ էլեկտրոնային համակարգի կիրառման միջոցով և տպվում են սպիտակ թղթի վրա՝ սև գույնով (բացառությամբ ընկերության լոգոտիպի և մինչև «1. Ապահովադիր» դաշտը (չներառելով այդ հորիզոնականը) լրացվող տեղեկատվության գույնի, որի ընտրությունը կատարվում է տվյալ ընկերության կողմից) և առնվազն համակարգչի 7 տառաչափով (բացառությամբ Վկայագրի տողատակի նշումների, որոնք կարող են տպվել ավելի փոքր տառաչափով), «Գրապալատ» տառատեսակով (համակարգչային անվանումը՝ «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat))՝ «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգով: Վկայագրի ձևի խախտում չեն համարվում Վկայագիրը պարունակող թղթի վրա կատարված

	դիզայներական ձևավորումները, որոնք չպետք է խոչընդոտեն Վկայագրի տեքստի լիարժեք ընթեռնելիությանը:
6.	Վկայագրերը տպագրվում են այնպես, որպեսզի պահպանվեն արտացոլման ենթակա բոլոր տվյալները՝ ըստ Պայմաններով հաստատված Վկայագրի ձևի բաժինների և յուրաքանչյուր բաժնի ներսում լրացման ենթակա տվյալների հաջորդականության: Վկայագրի բոլոր համարակալված բաժինները և դրանց ներքո գտնվող դաշտերը (աղյուսակները) պետք է միմյանցից սահմանազատվեն հստակ տեսանելի սահմանագծերով: Վկայագրի 2-րդ կամ 3-5-րդ կետերի չլրացվող դաշտերը, ինչպես նաև Վկայագրի «Նշումներ» դաշտի անհրաժեշտության բացակայության դեպքում՝ Վկայագրի այդ դաշտը չեն տպագրվում:

2. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԸ

Վկայագրի դաշտի անվանումը կամ համարը	**Լրացման ենթակա դաշտերում լրացվող տեղեկատվության բովանդակությունը (բոլոր տեղեկությունները Վկայագրում ենթակա են պարտադիր լրացման)**
«Ապահովագրական ընկերության լոգոտիպը»	Ապահովագրողի լոգոտիպը:
«Վկայագիր N»	Վկայագրի սերիան և հերթական համարը՝ յուրաքանչյուր վանդակում մեկ նիշ՝ Բյուրոյի խորհրդի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:
«ID կոդ»	ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից գեներացված նույնականացման համարը (ID կոդը):
«Ապահովագրող»	Ապահովագրողի՝ 1) անվանումը, 2) գտնվելու վայրի հասցեն, 3) ֆաքսը, 4) էլեկտրոնային փոստի հասցեն, 5) ինտերնետային կայքը, 6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման համարը, 7) լիցենզիայի համարը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշվեհամարը:
1.	Ապահովադրի՝
	Ֆիզիկական անձի դեպքում՝ 1) անունը և ազգանունը, 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ անձը հաստատող համարվող փաստաթղթերից որևէ մեկի համարը, 3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (չի

		լրացվում այն անձանց համար, ում, օրենքի համաձայն, հանրային ծառայությունների համարանիշ չի հատկացվում), 4) ծննդյան ամսաթիվը, 5) հաշվառման հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 6) վկայագրում նշված համապատասխան ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք տվող վարորդական վկայականի համարը, տրման ամսաթիվը, վարորդական ստաժը, վարորդական վկայականի կարգերը, դրանց տրման ամսաթվերը (բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովադիրը չի ցանկանում հանդես գալ որպես լիազորված տիրապետող, որի դեպքում կատարվում է «չի հանդիսանում լիազորված տիրապետող» նշումը), 7) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը:
	Իրավաբա-նական անձի դեպքում	1) լրիվ անվանումը, 2) ՀՎՀՀ-ն, 3) գտնվելու վայրի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը
	Հայաստանի Հանրապե-տության դեպքում	1) պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը, 2) պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 3) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը
	Օտարերկրյա պետության դեպքում՝	1) երկիրը, 2) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը (դեսպանատուն, հյուպատոսարան, այլ), 3) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը

	Համայնքի դեպքում՝	1) համայնքի անվանումը 2) համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը, 3) համայնքի անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը
	Միջազգային կազմակեր-պության դեպքում՝	1) միջազգային կազմակերպության անվանումը, 2) հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն, 3) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը
2.	լրացվում է այն ավտոտրանսպորտային միջոցների քանակը, որոնց օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրվում է Վկայագրով: Եթե նշված դաշտում լրացվում է 1-ից ավելի թիվ, ապա Վկայագրի 3-րդ, 4-րդ և 5-րդ դաշտերը չեն լրացվում, իսկ այդ դաշտերում լրացման ենթակա տեղեկատվությունն արտացոլվում է Վկայագրի հավելվածում, ընդ որում՝ Վկայագրի հավելվածի տողերն ավելացվում են Ավտոտրանսպորտային միջոցների քանակին համապատասխան:	
3.	լրացվում է այն ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները, որի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրվում է՝ 1) տեսակը՝ թեթև մարդատար, բեռնատար (ներառյալ՝ բեռնաուղևորատար ավտոմոբիլի դեպքում), միկրոավտոբուս (բացառությամբ վարորդի նստատեղի, 9-17 նստատեղ ունեցող ավտոմոբիլի դեպքում), ավտոբուս (բացառությամբ վարորդի նստատեղի, 17-ից ավելի նստատեղ ունեցող ավտոմոբիլի դեպքում), տրոլեյբուս, մոտոտրանսպորտ, այլ («այլ»-ի ներքո մտնում են տրակտորները և նախորդ նշումներում չընդգրկված այլ ավտոտրանսպորտային միջոցները): Սույն տվյալը պարունակող դաշտում լրացվում է նաև տեղեկատվություն ավտոտրանսպորտային միջոցի կցորդի առկայության («կցորդով» կամ «առանց կցորդի»՝ կախված այն հանգամանքից, թե պայմանագրի գործողության ընթացքում տվյալ ավտոտրանսպորտային միջոցին կցորդ կցվելու է, թե՝ ոչ) մասին, 2) մակնիշը (տիպարը) (օրինակ՝ BMW X5 4.4L), 3) հաշվառման համարանիշը, 4) հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը,	

	5) շարժիչի հզորությունը, 6) թափքի և նույնացման (VIN) համարները (առկայության դեպքում):	
4.	Որպես Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ հիմք է ընդունվում հետևյալ նպատակներից որևէ մեկը՝	
	Պայմանագրի գործողության ընթացքում Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ	***Նպատակի նկարագրություն***
	1. Անձնական	Ֆիզիկական անձանց պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված նպատակներով
	2. Ծառայողական	Ֆիզիկական անձանցից բացի ցանկացած այլ անձին պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված նպատակներով
	3. Առևտրային օգտագործման	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև ապրանքների փոխադրման ծառայությունների մատուցման նպատակով
	4. Հանրային տրանսպորտ	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև կանոնավոր ուղևորափոխադրումներ կատարելու նպատակով
	5. Տաքսի	Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև որպես տաքսի
	6. Այլ	այն ավտոտրանսպորտային միջոցները, որոնք օգտագործվելու են սույն կետի 1-5-րդ ենթակետերում նշված օգտագործման նպատակներից տարբերվող նպատակներով:
5.	Ապահովադրի հայեցողությամբ լրացվում է հետևյալ տարբերակներից որևէ մեկը. 1) նշվում են այն անձի վերաբերյալ սույն հրահանգի ***«Ապահովագրող»*** դաշտով սահմանված տվյալները, ով պայմանագրի գործողության ժամկետում վարելու է	

	ավտոտրանսպորտային միջոցը: Ընդ որում, եթե լիազորված տիրապետող է հանդիսանալու ապահովադիրը, ապա նշվում է՝ «Ապահովադիր»՝ առանց լրացուցիչ տվյալներ լրացնելու, 2) կատարվում է «*Առանց սահմանափակումների*» նշում, որը նշանակում է, որ Վկայագրով ապահովադիրը հայտարարում է, որ պայմանագրի գործողության ընթացքում իր կողմից վստահված ցանկացած անձ կարող է վարել ավտոտրանսպորտային միջոցը և այդ անձը համարվում է լիազորված տիրապետող, 3) այն դեպքում, երբ լիազորված տիրապետողների քանակը մեկից ավելի է, նշում է կատարվում «համաձայն Հավելվածի», և Վկայագրին կցվում է Վկայագրի համապատասխան հավելվածը (կախված այն հանգամանքից, թե մեկ, թե մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունն է ապահովագրվում տվյալ պայմանագրով), որտեղ արտացոլվում է բոլոր լիազորված տիրապետողների վերաբերյալ սույն հրահանգի ***«Ապահովագրող»*** դաշտով սահմանված տվյալները:
6.	պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը՝ օր/ամիս/տարի/ժամ ֆորմատով և հաջորդականությամբ:
8.	Ապահովադրի կողմից Պայմանների համաձայն հաշվարկված տվյալ պայմանագրով վճարման ենթակա ապահովագրավճարի մեծությունը՝ գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, դրամ՝ առանց բացատների ֆորմատով (օրինակ՝ -31500-դրամ): Այն դեպքում, երբ պայմանագրով ապահովագրվում են մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցներ, այս մասում նշվում է բոլոր Ավտոտրանսպորտային միջոցների համար հաշվարկված ապահովագրավճարների հանրագումարը, իսկ յուրաքանչյուր Ավտոտրանսպորտային միջոցի համար վճարման ենթակա ապահովագրավճարի մեծությունը նշվում է Վկայագրին կցվող հավելվածի համապատասխան դաշտում:
9.	նշում է կատարվում ապահովագրավճարի վճարման ձևի մասին, մասնավորապես, կանխիկ կամ անկանխիկ՝ միանվագ կամ տարաժամկետ վճարման եղանակներով: «Կանխիկ» դաշտում նշում կատարելու դեպքում նշվում է Վկայագրի համապատասխան սյունակում նշված երկու տարբերակներից որևէ մեկը՝ կախված նրանից, թե ապահովադիրը վճարման տարբերակներից ինչպիսի տարբերակ է ընտրել, ընդ որում, երկրորդ տարբերակը նշվելու դեպքում նշվում է նաև վճարված ապահովագրավճարի չափը և ապահովագրավճարի մնացած մասի վճարման կոնկրետ կարգն ու ժամկետները: «Անկանխիկ» դաշտում նշում կատարելու դեպքում համապատասխան սյունակում նշվում են ապահովագրավճարի վճարման կոնկրետ կարգն ու ժամկետները (օր.՝ 20.000 ՀՀ դրամը

	վճարվում է մինչև 16.05.2016 թ., իսկ մնացած 20.000 ՀՀ դրամը՝ մինչև 11.05.2017 թ.՝ յուրաքանչյուր ամիս հավասար չափաբաժիններով):	
11.	ապահովագրողի՝ շուրջօրյա հասանելի, առնվազն երեք միաժամանակյա զանգի սպասարկման հնարավորություն ապահովող առնվազն մեկ հեռախոսահամար, որով Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է զանգահարել Ապահովագրողին՝ ապահովագրական պատահարի մասին հայտնելու համար:	
14.	***Ապահովագրողի անունից հանդես եկող անձի տեսակը***	***Ապահովագրողի անունից հանդես եկող անձի վերաբերյալ տվյալները***
	1) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար	Գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը և Ապահովագրողի կնիքն՝ առկայության դեպքում (Պայմաններում թույլատրելի դեպքերում՝ ֆաքսիմիլային ստորագրությունը և կնիքը)
	2) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար չհանդիսացող այլ լիազորված ֆիզիկական անձ	Տվյալ լիազորված ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և տրման ամսաթիվը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը (Պայմաններում թույլատրելի դեպքերում՝ ֆաքսիմիլային ստորագրությունը և կնիքը)
	3) Ֆիզիկական անձ ապահովագրական գործակալ	Անունը, ազգանունը, որպես գործակալ հաշվառման վկայականի համարը (տրվելու դեպքում), ստորագրությունը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը, ընդ որում, սույն ենթակետով նախատեսված ստորագրությանը չի փոխարինում դրա ֆաքսիմիլային տարբերակը
	4) Իրավաբանական անձ ապահովագրական գործակալ	Անվանումը, իրավասություն ունեցող անձի անունը, ազգանունը և ստորագրությունը (կնիքն՝ առկայության դեպքում), և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը, ընդ որում,

		սույն ենթակետով նախատեսված ստորագրությանը չի փոխարինում դրա ֆաքսիմիլային տարբերակը
	Ապահովադրի անունից հանդես եկող անձի տեսակը	***Ապահովադրի անունից հանդես եկող անձի վերաբերյալ տվյալները***
	1) Ֆիզիկական անձ ապահովադիր	անունը, ազգանունը և ստորագրությունը
	2) Իրավաբանական անձ ապահովադիր	անունը և ազգանունը, ստորագրությունը և կազմակերպության կնիքն՝ առկայության դեպքում
	3) Ապահովադրի ներկայացուցիչ	անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և (կամ) տրման ամսաթիվը և ներկայացուցչի ստորագրությունը:
15.	Ապահովադրին Վկայագիրը տալու ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով և հաջորդականությամբ:	
16.	«Է կնքել» կամ «չի կնքել» բառերը՝ կախված այն հանգամանքից, թե այդ տարբերակներից որն է կիրառելի Ապահովագրողի նկատմամբ:	
«Նշումներ»	Կատարվում են հետևյալ նշումները. 1) կատարվում է «Կրկնօրինակ» նշագրում, եթե ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում Վկայագիրը վնասվելու (խոտանվելու), կորելու, հափշտակվելու կամ ոչնչացվելու հետևանքով ապահովադրի (ապահովադրի լիազորված անձի) դիմումի հիման վրա նրան տրվել է Վկայագրի կրկնօրինակ, 2) «Շահագործման նպատակ» դաշտում «հանրային տրանսպորտ» նշումը կատարվելու դեպքում լրացվում է «երթուղային տաքսի», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է որպես երթուղային տաքսի, կամ «ոչ երթուղային տաքսի», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է որպես այլ տեսակի հանրային տրանսպորտ, 3) «Օգտագործման նպատակ» դաշտում «այլ» նշումը կատարվելու դեպքում լրացվում է «վարձակալության նպատակով», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է պարբերաբար վարձակալության տրամադրելու նպատակով, կամ	

	«ոչ վարձակալության նպատակով», եթե ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է դրանից տարբերվող այլ նպատակով, 4) «Լիազորված տիրապետողներ» դաշտում «Առանց սահմանափակումների» նշումը կատարվելու դեպքում նշվում է ապահովագրավճարի հաշվարկման համար կիրառվող Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը, 5) «Ավտոտրանսպորտային միջոց (Ա/մ)» դաշտում, ավտոտրանսպորտային միջոցի տեսակը «միկրոավտոբուս» նշելու դեպքում լրացվում է «մինչև 18 նստատեղ ունեցող», իսկ «ավտոբուս» նշելու դեպքում՝ «18-ից ավելի նստատեղ ունեցող» բառերը:
Վկայագրի հավելվածը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիրը լրացվում են սույն հրահանգով Վկայագրի համապատասխան կետերով նախատեսված դաշտերի լրացման համար սահմանված կանոններին համապատասխան:	

ՀԱՎԵԼՎԱԾ 1.3. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

		N	Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը	Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկությունների ցանկը
Ապահովադրի և միացրված տիրապետողների վերաբերյալ	**Ֆիզիկական անձանց համար**	1	Անձը հաստատող փաստաթուղթ	1. Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե, 2. Ապահովադրի փոստային հասցե, 3. Ապահովադրի հեռախոսահամար, 4. Ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս) տեսակի Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում՝ Ավտոտրանսպորտային միջոցի՝ առանց վարորդի նստատեղի հաշվարկված նստատեղերի քանակ՝ տեխնիկական տվյալների համաձայն, 5. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ, 6. ապահովագրության ժամկետ, 7. ապահովագրավճարի վճարման նախընտրելի կարգ և ժամկետ, 8. Վկայագրի դաշտերի լրացման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:
		2	ՀՀ քաղաքացիների դեպքում, եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք	
		3	Վարորդական վկայական	
	Իրավաբանական անձանց համար	1	Հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող փաստաթուղթ	
	Այլ սուբյեկտների համար			
Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) վերաբերյալ		1	Հաշվառման (գրանցման) վկայագիր կամ այլ համարժեք փաստաթուղթ կամ մաքսային հայտարարագիր և Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն), եթե Հաշվառման (գրանցման) վկայագրով	

		կամ այլ համարժեք փաստաթղթով կամ մաքսային հայտարարագրով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությունը չի հաստատվում: Այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների գծով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար հաշվառման (գրանցման) վկայագրի փոխարեն ներկայացվում է իրավասու պետական մարմնի կողմից տվյալ Ավտոտրանսպորտային միջոցին հատկացված հաշվառման համարանիշը	
	2	Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն)	
Ներկայացված չեն հետևյալները	1	Անձը հաստատող փաստաթուղթ	
	2	Պատշաճ կերպով տրված լիազորագիր	

ՀԱՎԵԼՎԱԾ 1.4. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՁԵՎԸ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ Տ_ _____ՎԿԱՅԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ -----

Ապահովագրական ընկերության լոգոտիպը	*Ապահովագրության դասը՝ Ցամաքային Ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն*
Ապահովագրող	
Ապահովադիր	

Սույն համաձայնագրով Ապահովագրողը և Ապահովադիրը համաձայնում են ՕՕ/ԱԱ/SSSS կնքած ԹԻՎ Տ_ _____ վկայագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.	Վկայագրի (վկայագրի թիվ __ հավելվածի) դաշտը ___-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ (լրացնել հետևյալ դաշտով)
2.	Վկայագրի (վկայագրի թիվ ___հավելվածի) դաշտ ___-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ (լրացնել հետևյալ դաշտով)
...	Վկայագրի (վկայագրի թիվ ___հավելվածի) դաշտ ___-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ (լրացնել հետևյալ դաշտով)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
_____	_____
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝	
Սույն համաձայնագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝	

Հավելված 2
«ԱՊՊԱ հիմնարար պայմաններ» կանոնների

Ենթահավելված 2.1
2016 թվականի համար ԱՊՊԱ ոլորտում հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերի և ռիսկային գործակիցների թույլատրելի արժեքների չափը

1. ԱՊՊԱ ոլորտում հիմնական ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերն են՝ տարեկան համապատասխանաբար 31848 և 33122 Հայաստանի Հանրապետության դրամը:

2. ԱՊՊԱ ոլորտում մեկ տարի ժամկետով կնքվող պայմանագրերի գծով բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերն են՝ համապատասխանաբար 19000 և 110000 Հայաստանի Հանրապետության դրամը:

3. Մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի համար բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը հաշվարկվում են սույն ենթահավելվածի 2-րդ կետով սահմանված սահմանաչափերի նկատմամբ՝ կիրառելով Հավելվածի աղյուսակով նախատեսված համապատասխան գործակիցները:

4. ԱՊՊԱ ոլորտում ռիսկային գործակիցների թույլատրելի չափերն են՝

1) «ավտոտրանսպորտային միջոցի շահագործման տարեկան ինտենսիվություն» ռիսկային գործոնի համար՝ 1,00.

2) «ավտոտրանսպորտային միջոցի տիպ (տեսակ/մակնիշ)» ռիսկային գործոնի համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. մոտոտրանսպորտի համար՝ 0,58.

բ. թեթև մարդատար, միկրոավտոբուս՝ 1,00.

գ. բեռնատար (ներառյալ բեռնաուղևորատար)՝ 1,12.

դ. ավտոբուս, տրոլեյբուս՝ 1,1.

ե. այլ (տրակտոր և այլն)՝ 0,59.

3) «ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայր (շրջան)» ռիսկային գործոնի համար՝ 1,00.

4) «ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման ձև (նպատակ)» ռիսկային գործոնի համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. անձնական՝ 1,00.

բ. այլ (ծառայողական, առևտրային օգտագործման, հանրային տրանսպորտ (բացառությամբ երթուղային տաքսիների) և այլն)՝ 1,03, ընդ որում, ավտոբուս, տրոլեյբուս և բեռնատար տեսակի ավտոտրանսպորտային միջոցներն ընդգրկվում են սույն ռիսկայնության դասի մեջ՝ անկախ իրենց օգտագործման ձևից (նպատակից).

գ. տաքսի, վարձակալություն, հանրային տրանսպորտ (երթուղային տաքսիների մասով)՝ 1,44, ընդ որում, մոտոտրանսպորտ և այլ (տրակտոր և այլն) տեսակի ավտոտրանսպորտային միջոցները չեն ընդգրկվում սույն ռիսկայնության դասի մեջ՝ անկախ իրենց օգտագործման ձևից (նպատակից).

5) «ավտոտրանսպորտային միջոցի հզորություն (շարժիչի ծավալ/քաշ)» ռիսկային գործոնի համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. Մինչև 80 (ներառյալ) ձիաուժ՝ 0,80, իսկ բեռանատար տեսակի ավտոտրանսպորտային միջոցների համար՝ 0,71.

բ. 81-140 ձիաուժ, իսկ բեռանատար տեսակի ավտոտրանսպորտային միջոցների համար՝ նաև 140 ձիաուժից ավել ՝ 1,00.

գ. 141-230 ձիաուժ (բացառությամբ բեռանատար տեսակի ավտոտրանսպորտային միջոցների)՝ 1,27.

դ. 230 ձիաուժից ավել (բացառությամբ բեռանատար տեսակի ավտոտրանսպորտային միջոցների)՝ 1,45.

6) «ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի տարիք և վարորդական ստաժ» գործոնների համար՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի՝

ա. Մինչև 23 տարեկան և մինչև 3 տարվա վարորդական ստաժ՝ 1,47.

բ. Մինչև 23 տարեկան և 3 և ավելի տարվա վարորդական ստաժ՝ 1,36.

գ. 23 և ավել տարեկան և մինչև 3 տարվա վարորդական ստաժ՝ 1,09.

դ. 23 և ավել տարեկան և 3 և ավելի տարվա տարվա վարորդական ստաժ՝ 1,00.

ե. չսահմանափակված շրջանակի լիազորված տիրապետողներ՝ 1,60.

7) ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի վթարավտանգության աստիճանի վրա ազդող նրա առողջական վիճակի հետ կապված գործոնների համար՝ 1,00:

5. Բազային ապահովագրավճարի հաշվարկում որպես ավտոտրանսպորտային միջոցին վերաբերող լրացուցիչ գործոն նախատեսել «Կցորդի առկայություն (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության կցորդների)» ռիսկային գործոնը՝ ըստ ռիսկայնության հետևյալ դասերի և ռիսկային գործակիցների թույլատրելի չափերի՝

1) անձնական կամ այլ (ծառայողական, առևտրային օգտագործման, հանրային տրանսպորտ (բացառությամբ երթուղային տաքսիների) և այլն) նպատակներով օգտագործվող թեթև մարդատար ավտոմոբիլին, միկրոավտոբուսին կամ մինչև 80 ձիաուժ շարժիչի հզորություն ունեցող բեռնատար (ներառյալ բեռնաուղևորատար) տեսակի ավտոտրանսպորտային միջոցին կցված կցորդ՝ 1.11.

2) տաքսի, վարձակալություն, հանրային տրանսպորտ (երթուղային տաքսիների մասով) նպատակով օգտագործվող թեթև մարդատար ավտոմոբիլին կամ միկրոավտոբուսին կցված կցորդ՝ 1.08.

3) 81 և ավելի ձիաուժ շարժիչի հզորությամբ բեռնատար (ներառյալ բեռնաուղևորատար) տեսակի ավտոտրանսպորտային միջոցին կցված կցորդ՝ 1.19.

4) այլ (տրակտոր և այլն) ավտոտրանսպորտային միջոցին (անկախ դրա օգտագործման նպատակից) կցված կցորդ՝ 1.20,

5) կցորդի բացակայություն՝ 1.00:

6. ԱՊՊԱ սակագնի կառուցվածքում բեռնվածության չափը կազմում է 22-25 տոկոս:

7. Մեկ տարի ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրի համար հաշվարկված բազային ապահովագրավճարները կլորացվում են մինչև հազարերորդական նիշ՝ կլորացման նիշ ընդունելով 500-ից մեծ կամ փոքր մեծությունը:

Հավելված
«2016 թվականի համար ԱՊՊԱ ոլորտում հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերի և ռիսկային գործակիցների թույլատրելի արժեքների չափը» ենթահավելված 2. 1-ի

Ապահովագրության ժամկետ	Մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի գծով բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերի հաշվարկման համար կիրառվող գործակիցներ
11 ամսից մինչև 1 տարի	**1**

10 ամսից մինչև 11 ամիս ներառյալ	0.95
9 ամսից մինչև 10 ամիս ներառյալ	0.85
8 ամսից մինչև 9 ամիս ներառյալ	0.77
7 ամսից մինչև 8 ամիս ներառյալ	0.7
6 ամսից մինչև 7 ամիս ներառյալ	0.65
5 ամսից մինչև 6 ամիս ներառյալ	0.6
4 ամսից մինչև 5 ամիս ներառյալ	0.5
3 ամսից մինչև 4 ամիս ներառյալ	0.4
2 ամսից մինչև 3 ամիս ներառյալ	0.33
1 ամսից մինչև 2 ամիս ներառյալ	0.25
16 օրից մինչև 1 ամիս ներառյալ	0.2
11 օրից մինչև 15 օր ներառյալ	0.15
10 օր	0.1

Ենթահավելված 2. 2
2016 թվականի համար ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման ժամանակ բոնուս-մալուս համակարգի կիրառման

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն ենթահավելվածով սահմանվում են՝

1) Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման ժամանակ կիրառվող Բոնուս-Մալուս համակարգի կառուցվածքը և դրա կիրառման կարգը,

2) Բոնուս-Մալուս համակարգի դասերը, յուրաքանչյուր Բոնուս-Մալուս դասին համապատասխանող գործակիցները, Բոնուս-Մալուս դասի ստացման և դասից դաս անցման կանոնները,

3) Բոնուս-Մալուս համակարգի կիրառման շրջանակներում ապահովագրական պատմությունը հաշվի առնելու կարգը:

ԲԱԺԻՆ 2

ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 2

ԱՊՊԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ԴԱՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2. ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարը հաշվարկելիս Բոնուս-Մալուս (այսուհետ՝ ԲՄ) համակարգը կիրառվում է հետևյալ սկզբունքների համաձայն՝

1) ***սահմանափակ լիազորված տիրապետողներով*** ԱՊՊԱ պայմանագրի կնքման դեպքում առանձին-առանձին հաշվարկվում է յուրաքանչյուր լիազորված տիրապետողի գծով ապահովագրավճարի չափը՝ նրա համար հաշվարկված բազային ապահովագրավճարը բազմապատկելով իրեն տրվող ԲՄ դասին համապատասխանող գործակցով՝ համաձայն սույն ենթահավելվածի Հավելված 1-ի, և ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարի չափ է համարվում ստացված ապահովագրավճարներից առավելագույնը: Սույն ենթակետով նախատեսված լիազորված տիրապետողին տրվող ԲՄ դասը հաշվարկվում է սույն ենթահավելվածի ***3-րդ գլխով*** սահմանված կարգով,

2) ***անսահմանափակ լիազորված տիրապետողներով*** ԱՊՊԱ պայմանագրի կնքման դեպքում բազային ապահովագրավճարը բազմապատկվում է ***տվյալ պայմանագրով ապահովադրին*** տրվող ԲՄ դասին համապատասխանող գործակցով՝ համաձայն սույն ենթահավելվածի Հավելված 1-ի: Սույն ենթակետով նախատեսված ապահովադրին տրվող ԲՄ դասը հաշվարկվում է սույն ենթահավելվածի ***4-րդ գլխով*** սահմանված կարգով:

3. Սույն ենթահավելվածի համաձայն ԲՄ դասի հաշվարկն իրականացվում է համապատասխան անձի վերաբերյալ Տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության հիման վրա:

4. Սույն ենթահավելվածի շրջանակում ԲՄ դաս 22-ը համարվում է ԲՄ համակարգի առավելագույն, իսկ դաս 1-ը՝ նվազագույն դասը, և անկախ սույն ենթահավելվածով սահմանված հիմքերի առկայությունից՝ անձի ԲՄ դասը չի կարող դրանից համապատասխանաբար ավելանալ կամ նվազել:

5. Անձի ԲՄ դասի հաշվարկման ժամանակ սույն ենթահավելվածի 3-րդ և 4-րդ գլուխներով սահմանված հանգամանքները հիմք են ընդունվում՝ անկախ համապատասխան ժամանակահատվածում ավտոտրանսպորտային միջոցի կամ ապահովագրական ընկերության փոփոխման հանգամանքից:

6. Սույն ենթահավելվածի իմաստով՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը հավասարեցվում է նոր լիազորված տիրապետողներ ավելացնելու վերաբերյալ համաձայնագրի կնքումը՝ ավելացվող լիազորված տիրապետողների մասով:

7. Սույն ենթահավելվածի իմաստով ԲՄ դասերը հաշվարկվում են հետևյալ բանաձևի հիման վրա, բացառությամբ սույն ենթահավելվածի 11-րդ և 14-րդ կետերով նախատեսված դեպքերի

Բոնուս-Մալուս դաս = $Ն_{ԲՄ}$ – Մ(Բ),

որտեղ՝

$Ն_{ԲՄ}$-ն

ա) լիազորված տիրապետողին տրամադրման ենթակա ԲՄ դասի հաշվարկման պարագայում նախորդ կնքված պայմանագրում լիազորված տիրապետողին տրամադրման ենթակա ԲՄ դասն է (ընդ որում, տրամադրման ենթակա ԲՄ դասի հաշվարկման հիմքում չի դրվում մինչև սույն ենթահավելվածն ուժի մեջ մտնելն անձին 2012 թվականի համար փաստացի չտրամադրված բոնուսը), իսկ 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտնող ԱՊՊԱ պայմանագրերում առաջին անգամ որպես լիազորված տիրապետող նշվելու դեպքում՝ բազիսային ԲՄ դասը,

բ) ապահովադրին տրամադրման ենթակա ԲՄ դասի հաշվարկման պարագայում սկզբնական ԲՄ դասն է, որը հավասար է բազիսային դասին, իսկ եթե մինչև սույն ենթահավելվածն ուժի մեջ մտնելն անձին 2012 թվականի համար տրամադրվել է բոնուս՝ 9-րդ դասի,

Մ(Բ)-ն

ա) լիազորված տիրապետողին տրամադրման ենթակա ԲՄ դասի հաշվարկման պարագայում լիազորված տիրապետողին սույն ենթահավելվածի 8-րդ կամ 9-րդ կետի համաձայն տրամադրվող դասի չափն է: Ընդ որում, բոնուսի չափն ունի դրական մեծություն, իսկ մալուսինը՝ բացասական: Սույն ենթահավելվածի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում անձին Բոնուս և Մալուս չի տրվում, և սույն փոփոխականը բանաձևում ներառվում է 0 արժեքով:

բ) ապահովադրին տրամադրման ենթակա ԲՄ դասի հաշվարկման պարագայում ապահովադրին սույն ենթահավելվածի 13-րդ կետի համաձայն որպես բոնուս տրամադրվող դասերի չափի և սույն ենթահավելվածի 12-րդ կետի համաձայն որպես մալուս տրամադրվող դասերի չափի տարբերությունն է:

ԳԼՈՒԽ 3

ՈՐՊԵՍ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ԴԱՍԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԻՑ ԴԱՍ ԱՆՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

8. Յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի համար, որի առնչությամբ դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից անձի պատճառած վնասի գծով հատուցման որոշում է կայացվել, տվյալ անձին համապատասխան պայմանագրում որպես լիազորված տիրապետող նշվելիս տրամադրվում է մալուս՝ չորս դասի չափով: Ընդ որում միևնույն ապահովագրական պատահարի գծով տվյալ անձի գծով հատուցում վճարելու վերաբերյալ մեկից ավելի որոշում կայացվելու դեպքում հիմք է ընդունվում այդ որոշումներից միայն առաջինը:

9. Եթե դիտարկվող ժամանակահատվածում չի կայացվել սույն ենթահավելվածի 8-րդ կետով նախատեսված որևէ որոշում, և այդ ժամանակահատվածում առկա է առնվազն 345 օր, որի ընթացքում անձը որպես լիազորված տիրապետող նշված է եղել տվյալ պահին գործող որևէ ԱՊՊԱ պայմանագրում, ապա այդ անձին տրամադրվում է Բոնուս մեկ դասի չափով:

10. Սույն գլխի համաձայն՝ դիտարկվող ժամանակահատված է համարվում տվյալ անձի՝ որպես լիազորված տիրապետող հաշվարկված ԲՄ դասը նախորդ անգամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս փոխելու օրվանից, իսկ այդպիսի փոփոխություն տեղի ունեցած չլինելու դեպքում՝ 2013 թվականի հունվարի 1-ից սկսած մինչև նոր ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը նախորդող օրը ներառյալ:

11. Եթե ԱՊՊԱ պայմանագրի կնքման օրվան նախորդող առնվազն չորս անընդմեջ տարիների ընթացքում չի կայացվել սույն ենթահավելվածի 8-րդ կետով նախատեսված որևէ որոշում, և այդ ժամանակահատվածում առկա է առնվազն 1380 օր, որի ընթացքում անձը որպես լիազորված տիրապետող նշված է եղել գործող որևէ ԱՊՊԱ պայմանագրում, և, եթե տվյալ անձին նախորդ պայմանագրում որպես լիազորված տիրապետող տրամադրման ենթակա ԲՄ դասը բարձր է եղել բազիսային դասից, ապա այդ անձին նոր ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս որպես լիազորված տիրապետող տրամադրվում է բազիսային ԲՄ դաս:

ԳԼՈՒԽ 4
ՈՐՊԵՍ ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ԴԱՍԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԻՑ ԴԱՍ ԱՆՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

12. Յուրաքանչյուր ԱՊՊԱ պատահարի համար, որի առնչությամբ 2013 թվականի հունվարի 1-ից սկսած ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից անձի կողմից նախկինում կնքված անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրերում նշված որևէ ավտոտրանսպորտային միջոցով պատճառած վնասի գծով հատուցման որոշում է կայացվել, այդ անձի կողմից նոր անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս տրամադրվում է մալուս՝ չորս դասի չափով: Ընդ որում միևնույն ապահովագրական պատահարի գծով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի գծով հատուցում վճարելու վերաբերյալ մեկից ավելի որոշում կայացվելու դեպքում հիմք է ընդունվում այդ որոշումներից միայն առաջինը: Մեկ տարվա ընթացքում մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցներով պատճառված վնասների գծով հատուցում վճարելու մասին որոշում կայացվելու դեպքում սույն կետի հաշվարկում որպես այդ տարվա ընթացքում կայացված որոշումների քանակ հիմք են ընդունվում առավել շատ այդպիսի որոշումներ ունեցող ավտոտրանսպորտային միջոցների գծով կայացված հատուցման որոշումների քանակը:

13. 2013 թվականի հունվարի 1-ից սկսած յուրաքանչյուր անընդմեջ 345 օրվա համար, որի ընթացքում անձը որպես ապահովադիր նշված է եղել անսահմանափակ լիազորված տիրապետողներով որևէ գործող ԱՊՊԱ պայմանագրում, և այդ ընթացքում չի կայացվել

սույն ենթահավելվածի 12-րդ կետով նախատեսված որևէ որոշում, այդ անձին տրամադրվում է Բոնուս մեկ դասի չափով:

14. Եթե անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագրի կնքման օրվան նախորդող առնվազն չորս անընդմեջ տարիների ընթացքում չի կայացվել սույն ենթահավելվածի 12-րդ կետով նախատեսված որևէ որոշում, և այդ ժամանակահատվածում առկա է առնվազն 1380 օր, որի ընթացքում անձը որպես ապահովադիր նշված է եղել տվյալ պահին գործող անսահմանափակ լիազորված տիրապետողներով որևէ ԱՊՊԱ պայմանագրում, և, եթե տվյալ անձին նախորդ անսահմանափակ լիազորված տիրապետողներով պայմանագրում որպես ապահովադիր տրամադրման ենթակա ԲՄ դասը բարձր է եղել բազիսային դասից, ապա այդ անձին նոր ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս որպես ապահովադիր տրամադրվում է բազիսային ԲՄ դաս:

ԳԼՈՒԽ 6
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ տեղի ունեցած պատահարների առնչությամբ ընդունված հատուցում վճարելու վերաբերյալ որոշումները չեն ընդգրկվում մալուսի հաշվարկում՝ անկախ այդ որոշումները կայացվելու և Տեղեկատվական համակարգ մուտքագրվելու ամսաթվից:

16. Բոնուս-Մալուս համակարգի՝ 30 դաս պարունակող դասային համակարգի շրջանակներում տրված դաս 16-ը և դաս 15-ը Բոնուս-Մալուս համակարգի՝ 22 դաս պարունակող դասային համակարգի շրջանակներում համարվում են համապատասխանաբար դաս 10-ը և դաս 9-ը:

Հավելված
«2016 թվականի համար ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների
հաշվարկմանի համար ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների» ենթահավելվածի . 2-թ

ԲՈՆՈՒՍ-ՄԱԼՈՒՍ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԱՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ (ԱՐԺԵՔՆԵՐԸ)

ԲՄ դասեր	Գործակցի մեծությունը (%-ային արտահայտությամբ)
դաս 22	200%
դաս 21	180%
դաս 20	160%
դաս 19	152%
դաս 18	144%
դաս 17	136%
դաս 16	128%
դաս 15	120%
դաս 14	116%
դաս 13	112%
դաս 12	108%
դաս 11	104%

դաս 10 (բազիսային դաս)	100%
դաս 9	97%
դաս 8	94%
դաս 7	91%
դաս 6	88%
դաս 5	85%
դաս 4	82%
դաս 3	75%
դաս 2	65%
դաս 1	50%

Ենթահավելված 2. 3
Գործակալական միջնորդավճարի նվազագույն և առավելագույն սահմանաչափերը

Ցուցանիշի անվանումը	***Նվազագույնը***	***Առավելագույնը***
ԱՊՊԱ ոլորտում գործակալական միջնորդավճարի չափն առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով (հաշվարկի մեջ հաշվի են առնվում տվյալ ապահովագրական գործակալին (գործակալներին) ցանկացած ձևով տրվող այն հատուցումները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են վերջինի (վերջիների) կողմից ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանը միջնորդելու գործընթացի հետ)	*ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 0%*	*ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 0%*
ԱՊՊԱ ոլորտում գործակալական միջնորդավճարի չափն առցանց էլեկտրոնային տարբերակներից տարբերվող ցանկացած այլ եղանակով կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով (հաշվարկի մեջ հաշվի են առնվում տվյալ ապահովագրական գործակալին (գործակալներին) ցանկացած ձևով տրվող այն հատուցումները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են վերջինի (վերջիների) կողմից ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանը միջնորդելու գործընթացի հետ)	*ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովա-գրավճարի 0%*	*ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրա-վճարի 15% (ներառյալ հարկերը)*

Ենթահավելված 2. 4
Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրավճարների սահմանման և դրա կիրառման գործընթացի նկատմամբ նվազագույն պահանջները

1. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Պայմաններով հաստատված սահմանաչափի նվազագույն և առավելագույն միջակայքում ինքնուրույն են ընտրում ԱՊՊԱ ոլորտում կիրառվող հիմնական ապահովագրավճարի չափը՝ դրա գործողության մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Բյուրոյին:
2. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների՝ ներառյալ ապահովագրական գործակալների միջոցով իրավունք չունեն ԱՊՊԱ պայմանագրի համար Պայմանների համաձայն հաշվարկված վերջնական ապահովագրավճարների նկատմամբ կիրառել որևէ ուղղակի և անուղղակի զեղչեր՝ ներառյալ տրամադրել ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը ուղեկցող ցանկացած անհատույց կամ զեղչված գնով ծառայություններ կամ նվերներ:
3. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններն ինքնուրույն են սահմանում ապահովագրավճարների տարաժամկետ վճարման հնարավորությունները և կարգը՝ բացառությամբ ֆիզիկական անձ Ապահովադիրների հետ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի, որոնց գծով ապահովագրավճարի առնվազն 50%-ը պետք է փաստացի վճարվի ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին կամ կնքման պահից հետո 10 օրվա ընթացքում:
4. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններն իրենց պաշտոնական ինտերնետային կայքում մշտապես հրապարակում են տվյալ պահի դրությամբ իրենց կողմից կիրառվող՝
   1) հիմնական և բազային ԱՊՊԱ ապահովագրավճարների չափերը,
   2) ԱՊՊԱ ապահովագրավճարի տարաժամկետ վճարման հնարավորությունները,

5. ԱՊՊԱ ապահովագրավճարի էլեկտրոնային հաշվիչը, որով ցանկացած անձ կկարողանա սույն կանոններով նախատեսված՝ ապահովագրավճարի մեծության վրա ազդող պայմանների մուտքագրմամբ հաշվարկել տվյալ ապահովագրական ընկերությունից ձեռքբերվող ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի չափը:

Հավելված 3
«ԱՊՊԱ հիմնարար պայմաններ» կանոնների

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԻՄՔԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՊԱՀԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

N	**ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքը**	**ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման պահը**	**Ապահովագրողին ներկայացվող փաստաթղթերի ցանկը**	**ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման և դրա հաշվարկման կարգն ու պայմանները**
1.	Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից տարբերվող այլ անձի անունով՝ բացառությամբ եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վարձակալն է: Եթե Ապահովադիրը Ավտոտրանսպորտային միջոցի ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալն է, ապա ԱՊՊԱ պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է այն	Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում, 2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) 3. Դադարեցման համապատասխան հիմքը հավաստող փաստաթուղթը, եթե	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ

	դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը, և Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովադրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի		դրան Ապահովագրողը չի տիրապետում 4. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
2.	Ավտոտրանսպորտային միջոցը հանվել է (ներառյալ՝ ժամանակավոր) հաշվառումից	Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու օրվան հաջորդող օրը՝ բացառությամբ խոտանման հիմքով հաշվառումից հանվելու, հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև հաշվառումից հանվելու այնպիսի դեպքերի, երբ նույն պահին ավտոտրանսպորտային միջոցը հաշվառվում է այլ անձի անվամբ (անվանմամբ), որոնց դեպքում պայմանագիրը վաղաժամկետ դադարում է ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու պահին		

3.	Ապահովագրողը լուծարվել է, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այն ապահովագրական ընկերության հետ, որին Ապահովագրողը փոխանցում է ապահովագրական պորտֆելը	Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում, 2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
4.	Օրենքով նախատեսված դեպքերում Ապահովագրողն իր ապահովագրական պորտֆելը փոխանցում է այլ ապահովագրական ընկերության, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այդ ապահովագրական ընկերության հետ			

5.	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ԱՊՊԱ պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով		1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում 2. ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորության կամ ապահովագրական ռիսկի գոյության վերացումը հիմնավորող փաստաթղթեր, եթե դրանց Ապահովագրողը չի տիրապետում, 3. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին)	

			4. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
6.	Ապահովադրի պահանջով	Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի դիմումի մեջ նշված օրը, բայց ոչ շուտ, քան դիմումի ներկայացման ամսաթվին հաջորդող օրը	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում, 2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրի գծով փաստացի վճարված ապահովագրավճարի 80%-ը՝ ((վճարված ապահովագրավճար * 80 % / պայմանագրի գործողության օրեր) * պայմանագրի չլրացած օրեր): Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Ապահովագրողն իրավունք ունի իր հայեցողությամբ սույն հաշվարկում 80%-ի փոխարեն հիմք ընդունել ապահովագրավճարի 100%-ը:

			նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
7.	Ապահովագրողի պահանջով, եթե Ապահովադիրը թույլ է տվել Պայմանների էական խախտում: Ընդ որում, Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Ապահովադիրը խախտել է սույն կանոնների 25-րդ կետով սահմանված պահանջը, սակայն արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացման վրա որակապես ազդող փոփոխությունները, ինչպես նաև եթե Ապահովադրի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով	Ապահովագրողի կողմից խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո	-	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարի և այդ պայմանագրով Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը՝ վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր –հատուցումների գումար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած
8.	Ապահովադրի պահանջով, եթե Ապահովագրողը թույլ է տվել պայմանագրի պայմանների էական խախտում	Ապահովադրի կողմից նման խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման	Վերադարձվում է հետևյալ մեծություններից առավելագույնը՝ վճարված ապահովագրավճարների և այդ պայմանագրով Ապահովագրողի կողմից

		պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո	վերաբերյալ գրավոր դիմում՝ հիմնավորելով Ապահովագրողի կողմից կատարված խախտումները, 2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը կամ պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Այն դեպքում, երբ պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է (այն է՝ Պայմանների խախտմամբ՝ սահմանված ժամկետում վճարման ենթակա գումարի չվճարումը կամ ոչ ամբողջական վճարումը), ապա Ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ:
9.	Ապահովագրողի պահանջով, եթե պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովադիրը պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին (լիազորված	Ապահովագրողի պահանջով՝ անմիջապես	-	Ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն

	անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության վերաբերյալ: Ընդ որում, Ապահովագրողը չի կարող օգտվել նշված իր իրավունքից, եթե պայմանագրի կնքման պահին նա գիտեր կամ կարող էր իմանալ, որ Ապահովադրի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ, կամ պայմանագիրը կնքվել է Վկայագրի համապատասխան մասերում տեղեկատվության բացակայության պայմաններում, ինչպես նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում			
10.	Ապահովադրի պահանջով, եթե Ապահովագրողը սահմանված կարգով ծանուցել է Պայմանների	Ապահովադրի պահանջով՝ անմիջապես	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝

	դրույթների փոփոխման մասին և Ապահովադիրը համաձայն չէ կատարված փոփոխություններին		դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում, 2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած
11.	Վկայագրով նախատեսված ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարումն Ապահովադրի կողմից կետանցվել է և Ապահովագրողը պայմանագրի նախատեսվող դադարեցումից ոչ շուտ, քան քսան և ոչ ուշ, քան	Ապահովագրողի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ամսաթվից, բայց ոչ շուտ, քան Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) չվճարման (կետանցման)	-	

	տասն օր առաջ ծանուցել է Ապահովադրին՝ ապահովագրա-վճարի հերթական մասը վճարելու անհրաժեշտության և չվճարելու դեպքում, որպես հետևանք ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին	օրվանը հաջորդող օրվանից		
12.	Օրենքով նախատեսված այլ դեպքերում և կարգով			

Ապահովագրավճարի վերադարձման կարգն ու ժամկետները

Ապահովագրողը սույն հավելվածով նախատեսված դեպքերում ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման պարտավորության ծագման դեպքում պարտավոր է վաղաժամկետ դադարեցման դիմումի ստացման և ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ամսաթվերից ավելի ուշ ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել ապահովագրավճարի համապատասխան մասը և Ապահովադրին ծանուցել (տրամադրել) վաղաժամկետ դադարեցման արդյունքում վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկը, որը պետք է առնվազն պարունակի սույն կանոնների հավելված 3.1-ով նախատեսված տեղեկատվությունը:

Հավելված 3.1
«ԱՊՊԱ հիմնարար պայմաններ» կանոնների

ՀԱՇՎԱՐԿ
ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ

1	Ապահովագրողի անվանումը, Ապահովագրողի հասցեն		
2	Ապահովադրի անունը և ազգանունը (անվանումը), Ապահովադրի նույնականացնող տվյալները		
3	Վկայագրի համարը		
4	Պայմանագրի կնքման ամսաթիվը		
5	Պայմանագրի գործողության ժամկետը		
		Սկիզբ	Ավարտ
6	Վճարված ապահովագրավճարը		
7	Պայմանագրի դադարեցման հիմքը		
8	Պայմանագրի դադարեցման ամսաթիվը		
9	Չլրացված օրերի քանակը		
10	Վերադարձման ենթակա ապահովագրավճարը		
11	Վերադարձման ենթակա ապահովագրավճարի ստացման եղանակը		
12	Ապահովագրողի անունից հաշվարկը կազմեց՝ (պաշտոն, անուն ազգանուն, ստորագրություն)		